

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ԾՐԱԳԻՐ  
2016-2020 ԹԹ.

ԶԵԿՈՒՅՑ  
2016/2017 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2017

ՀՏԴ 378

ԳՄԴ 74.58

Զ 352

### Կազմողներ՝

Սիմոնյան Ա. Հ.

Գրիգորյան Ա. Կ.

Գևորգյան Գ. Գ.

Մարկոսյան Ռ. Լ.

Բուդաղյան Ա. Ս.

Բրուտյան Ա. Խ.

Զ 352 ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2016-2020 թթ.: Զեկույց 2016/2017 ուստարում նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ/ Կազմողներ՝ Ա. Հ. Սիմոնյան, Ա. Կ. Գրիգորյան, Գ. Գ. Գևորգյան, Ռ. Լ. Մարկոսյան, Ա. Ս. Բուդաղյան, Ա. Խ. Բրուտյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 92 էջ:

Սույն զեկույցում ներկայացվում է Երևանի պետական համալսարանի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացմանն ուղղված 2016/2017 ուստարվա գործողությունների կատարողականը:

Զեկույցի նպատակն է թափանցիկ և հրապարակայնորեն ներկայացնել ԵՊՀ զարգացման ռազմավարական խնդիրների ուղղությամբ իրականացված աշխատանքները, ապահովել ԵՊՀ գործունեության հաշվետվողականությունը համալսարանական և լայն հանրության առջև: Զեկույցը հնարավորություն է ընձեռում մշտադիտարկելու ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացը, բացահայտելու առկա խնդիրները և նախանշելու դրանց լուծման ուղիները:

ՀՏԴ 378

ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-2249-0

© ԵՊՀ հրատ., 2017

© Կազմողներ, 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| ՆԱԽԱԲԱՆ .....   | 5  |
| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ<br>ԳՆԱՀԱՏՈՒՄ .....          | 6  |
| I. Որակյալ կրթություն .....                                     | 6  |
| II. Արդիական հետազոտություն և նորարարություն .....              | 26 |
| III. Հանրային ներգրավում և ծառայություններ.....                 | 33 |
| IV. Որակյալ մարդկային ռեսուրսներ .....                          | 41 |
| V. Որակյալ ենթակառուցվածքներ .....                              | 48 |
| VI. Որակյալ ծառայություններ.....                                | 56 |
| VII. Ընդունելության բազմազանեցում և<br>համապատասխանություն..... | 67 |
| VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ<br>կառավարում ..... | 77 |
| IX. Միջազգայնացում և գործակցություն .....                       | 88 |



## ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանը 2016/2017 ուստարում իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: ՌԾ-ով սահմանված ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրների կատարումը միտված է համալսարանում որակյալ կրթության ապահովմանը, արդիական բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ մարդկային ռեսուրսների կատարելագործմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցման ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը: ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանով սահմանված են այդ խնդիրների համապատասխան գործողությունների կատարման ժամկետները և պատասխանատուները, պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները և ակնկալվող արդյունքները:

Ստորև ներկայացվում է 2016/2017 ուստարում այդ խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

*Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից:*

«Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի *Խնդիր 1.1*-ով սահմանված է. «*Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ*»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «*Վերանայել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար)*»: Այս առումով դեռևս 2015/2016 ուստարվա երկրորդ կիսամյակից սկսվել և լիովին իրականացվել են մագիստրոսի կրթական ծրագրերի ուղղությամբ նախատեսված աշխատանքները, վերանայվել և լրամշակվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը, որոնք ընդհանրացվել են մեկ միասնական փաստաթղթում, որը հաստատվել

է ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. հուլիսի 7-ի նիստում: Այն տեղադրված է ԵՊՀ պաշտոնական կայքում:

Նույն ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել նաև «Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթի լրամշակման ուղղությամբ, որի վերջնականացման գործընթացը, սակայն, հետաձգվել էր՝ կապված «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքում բակալավրի ծրագրի բովանդակության անհրաժեշտ նվազագույնի պահանջների փոփոխության հետ: Անցած ուսումնական կիսամյակում այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվել և ավարտվել են: Մշակված փաստաթուղթը հաստատվել է համալսարանի գիտական խորհրդի 2017 թ. մայիսի 4-ի նիստում և տեղադրվել ԵՊՀ պաշտոնական կայքում: «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ղեկավար ձեռնարկը միասնական փաստաթուղթ է առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար, որով սահմանվում են բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով: Այս փաստաթուղթը էականորեն տարբերվում է իր նախորդներից: Մասնավորապես, եթե նախկինում առկա ուսուցման ուսումնական կիսամյակի տևողության համար սահմանված 20 շաբաթից 16-ը հատկացվում էր տեսական ուսուցմանը, իսկ 4-ը՝ քննաշրջանին, ապա ներկա փաստաթղթի համաձայն՝ 15 շաբաթ հատկացվում է լսարանային պարապ-

մունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգարքներին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին: Հեռակա ուսուցման ուսումնական կիսամյակի համար սահմանված 16-շաբաթյա տևողությունը հիմնականում բաշխվում է նախկինի պես՝ 4 շաբաթ հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին, խորհրդատվություններին և ընթացիկ քննություններին, իսկ 4-ը՝ եզրափակիչ քննություններին: Ուսումնական վերջին (առկա ուսուցման՝ 8-րդ, հեռակա ուսուցման՝ 10-րդ) կիսամյակում լսարանային դասընթացներ նախատեսված չեն:

Զգալի փոփոխություններ են կատարվել կրթական ծրագրի կառուցվածքում: Ծրագրի ընդհանուր կառուցամասը նախկինում ներառում էր 2 կրթամաս՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) ու ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ)՝ համապատասխանաբար պարտադիր և կամընտրական դասընթացներով: Ներկա փաստաթուղթը սահմանում է ծրագրի 2 կառուցամաս՝ ընդհանուր կրթական և մասնագիտական, որոնք համապատասխանաբար բաղկացած են պարտադիր և կամընտրական դասընթացներից: Ընդ որում, ընդհանուր կրթական կառուցամասում պարտադիր դասընթացները հիմնականում իրականացվում են 1-ին կուրսում և նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Կամընտրական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 6 կրեդիտ է և ներառում է 2 կրեդիտանոց 3 դասընթաց, որոնք իրականացվում են 2-րդ կուրսում: Մասնագիտական կառուցամասը ներառում է պարտադիր մասնագիտական, կամընտրական կամ հատուկ մասնագիտական



դասընթացներ և կրթական այլ մոդուլներ: Այս կառուցամասի կամ-  
ընտրական դասընթացներն առկա ուսուցման համակարգում իրակա-  
նացվում են 5-7-րդ, հեռակա ուսուցման համակարգում՝ 7-9-րդ կիս-  
ամյակներում: Կառուցամասային փոփոխություններով պայմանավոր-  
ված՝ կատարվել է նաև դասընթաց-մոդուլների փոփոխություն: Այս-  
պես, «Հայոց լեզու և գրականություն» դասընթացը փոխարինվել է  
«Հայոց լեզու և խոսքի մշակույթ»-ով, «Համակարգչից օգտվելու հմտու-  
թյուններ»-ը՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունք-  
ներ»-ով և այլն: Ներմուծվել են «Կիրառական վիճակագրություն և  
տվյալների հետ աշխատանք», «Գործարարության հիմունքներ», «Սո-  
ցիոլոգիայի հիմունքներ» և այլ դասընթացներ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել ավարտական աշխա-  
տանքին, որի աշխատածավալը 12 կրեդիտից հասցվել է 20 կրեդիտի:  
Մշակվել է «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավար-  
տական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը», որը  
քննարկվել է ֆակուլտետներում և կրթական կենտրոններում, այնու-  
հետև ստացված առաջարկությունների հիման վրա արված համապա-  
տասխան փոփոխություններով ներկայացվել է ԵՊՀ ԳԽ-ի հաստատ-  
մանը (հաստատվել է ԳԽ-ի 2017 թ. հոկտեմբերի 12-ի նիստում):

*Խնդիր 1.1-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Վերամշակել  
մագիստրոսի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջա-  
նակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) հա-  
մապատասխան»:*

Այս ուղղությամբ աշխատանքներն սկսվել և ավարտվել են նախատեսված ժամկետում՝ համաձայն ԵՊՀ ռեկտորի համապատասխան հրամանի և սահմանված հստակ ժամանակացույցի: Նշված հրամանը, կից ժամանակացույցը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի փաթեթը էլեկտրոնային փոստով տրամադրվել են մագիստրոսի կրթական ծրագրեր իրականացնող ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներին: Փաստաթղթերի փաթեթը ներառել է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը», «ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», «Կրթական ծրագրի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույցը», առկա և հեռակա ուսուցման (առանձին-առանձին) մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթերը, ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթը, «ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը», ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը», ՀՀ ԿԳ նախարարի հրամանով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկը:

Աշխատանքներն սկսվել և ընթացել են ըստ ժամանակացույցի: Նախ, յուրաքանչյուր ծրագրի համար ստեղծվել է ծրագրի լրամշակման աշխատանքային խումբ, որը լրացրել և ֆակուլտետի ԳԽ-ի հաստատմանն է ներկայացրել տվյալ կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթը, ինչն այնուհետև ներկայացվել է Որակի

ապահովման կենտրոն՝ հայտի գնահատման և ծրագրի հետագա մշակումն արտոնելու համար:

Տեսական և հետևողական աշխատանքների շնորհիվ ստեղծվել են սահմանված ձևաչափերով և գործող պահանջներին համապատասխան ծրագրերի ամբողջական փաստաթղթային փաթեթները, որոնք ընդգրկում են ծրագրի ուսումնական պլանը, ծրագրի մասնագիրը՝ ներառյալ ուսումնական մոդուլների համառոտագրերը: Դրանք լիովին համապատասխանեցվել են «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (հաստատված ԵՊՀ ԳԽ 2016 թ. հուլիսի 7-ի նիստում) փաստաթղթի պահանջներին:

Ծրագրերի փաստաթղթային փաթեթները ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կողմից ստուգվելուց հետո տրամադրվել են փորձաքննական հանձնաժողովներին, որոնք անցկացրել են փորձաքննություն և համապատասխան եզրակացությունը ներկայացրել ՈԱ կենտրոն: Գործընթացի հաջորդ փուլում փորձաքննության և ՈԱԿ-ի եզրակացությունները ներկայացվել են ԵՊՀ ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողով՝ վերջնական եզրակացության համար: Լրամշակված կրթական ծրագրերի վերաբերյալ վերջնական եզրակացությունների հիման վրա ԵՊՀ գիտական խորհուրդը 2017 թ. մարտի 2-ի նիստում հաստատել է առկա ուսուցման 115, հեռակա ուսուցման 23 մագիստրոսի կրթական ծրագիր, որոնք իրականացվում են ընթացիկ՝ 2017/2018 ուստարվանից:

*Խնդիր 1.1*-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ստեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով»: Այդ նպատակով «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում» առանձին բաժին է ներդրվել (բաժին 11), որտեղ տրված են կրթական ծրագրի պատասխանատուի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: ԵՊՀ-ում բակալավրի կրթական ծրագրի պատասխանատուի «ինստիտուտի» ստեղծման շրջանակում նախատեսված է ուսումնական բեռնվածություն (30 ժամ ուստարվա համար)՝ ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի վերամշակված նորմերով (հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մարտի 30-ի 6/2 որոշմամբ):

*Խնդիր 1.1*-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Վերամշակել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան»: Այս գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են ընթացիկ ուսումնական տարեակգրից և ընթանում են՝ համաձայն «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման վերաբերյալ» ԵՊՀ ռեկտորի 2017 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 172Տ13 հրամանի և սահմանված հստակ ժամանակացույցի: Նշված հրամանը, կից ժամանակացույցը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի փաթեթը էլեկտրոնային փոստով տրամադրվել են բակալավրի կրթական ծրագիր իրականացնող ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներին:

*Խնդիր 1.1*-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր»: Այս ուղղությամբ թեև որոշակի աշխատանք տարվել է (մասնավորապես միջմասնագիտական մագիստրոսական մի քանի ծրագրի մշակման ուղղությամբ), սակայն գործողությունը հիմնականում չի կատարվել: Նախատեսվում է շարունակել այն իրականացնելուն նպատակաուղղված աշխատանքները և սահմանված ժամկետում (մինչև 2020 թ.) մշակել և ներդնել անհրաժեշտ թվով միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր:

Նշված խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. «Վերանայել կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը»: Այս ուղղությամբ աշխատանքները սկսվել և իրականացվել են սահմանված ժամկետում: ԵՊՀ ռեկտորի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը քննարկել, վերանայել և լրամշակել է առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը, որոնց հիմքի վրա կազմվել է մեկ միասնական փաստաթուղթ՝ «Բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»: Փաստաթղթի նախագիծը քննարկվել է համալսարանի բոլոր ֆակուլտետներում, կրթական կենտրոններում և ինստիտուտներում, այնուհետև, ստացված առաջարկությունների և կարծիքների հիման վրա արված փոփոխություններով, ներկայացվել ԵՊՀ գիտական խորհուրդ: «Բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական

ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը» հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում: Այն գործողության մեջ է մտել 2017 թ. սեպտեմբերի 1-ից:

Կարգը սահմանում է Երևանի պետական համալսարանում առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը և այլն:

Նոր կարգը էականորեն տարբերվում է նախորդներից: Դրանում հաշվի են առնվել անցած տարիների փորձը, ինչպես նաև կատարված դիտարկումների արդյունքները: Այսպես, փոփոխության են ենթարկվել ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը, մասնավորապես սահմանվել են 15-շաբաթյա լսարանային պարապմունքներ, իսկ միջանկյալ քննությունների անցկացմանը հատկացվող 2 շաբաթվա ընթացքում ուսանողներն ազատվում են դասերին հաճախելուց: Փոփոխություններ են կատարվել նաև սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգում. օրինակ՝ մասնագիտական դասընթացներում ներմուծվել է 4 խումբ գնահատման ձև՝ եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման, առանց ընթացիկ գնահատման և ստուգարքային: Ընդ որում՝ առանց ընթացիկ գնահատման (միայն եզրափակիչ քննությամբ) և առանց եզրափակիչ գնահատման կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթացները, իսկ եզրափակիչ գնահատումով կարող են լինել միայն այն դասընթացները, որոնք կիսամյակում ունեն առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն:

Փոխությունները վերաբերում են նաև քննությունների վերահանձնման և դասընթացի կրկնման գործընթացներին: Օրինակ՝ եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողին չի թույլատրվում այն վերահանձնել, քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողը ռեկտորատի որոշմամբ հեռացվում է համալսարանից, մագիստրոսական թեզի ատեստավորումը չանցած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով և այլն:

Ուսումնական աշխատանքների և գործընթացների բարելավման նպատակով նոր կարգում տեղ են գտել պահանջներ ուսանողի անձնական գործի և ուսումնական քարտի, առցանց դասընթացի, պրակտիկայի կազմակերպման, կուրսային աշխատանքի պատրաստման և գնահատման վերաբերյալ և այլն: Կարգի առանձին կետեր վերաբերում են կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգին և կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներին:

***Խնդիր 1.1***-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ»:* Այս ուղղությամբ աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

***Խնդիր 1.2***-ով սահմանված է. *«Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները»:*

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով», իսկ 4-րդ գործողությամբ՝ «Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով»: Խնդրի իրականացման նպատակով մշակվել և Եվրամիության «Էրազմուս պլուս» ծրագրի ֆինանսավորմանն է ներկայացվել համապատասխան նախագիծ՝ «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» անվանումով: Նախագիծը հավանության է արժանացել Եվրահանձնաժողովի համապատասխան գործակալության կողմից և ստացել եռամյա ֆինանսավորում 2018-2020 թթ. համար:

Նախագծի հիմնական նպատակներն են.

1. Ուսանողի ուսումնական փորձառության բարելավում գործընկեր երկրներում ET 2020 խնդիրներին համահունչ՝ օժանդակելով դասավանդման և ուսումնառության զարգացմանը և նորարարությանը, աջակցելով տեխնոլոգիաների և հետազոտության ինտեգրացիային ու լավագույն փորձի տարածմանը:
2. Արդիականացնել բարձրագույն կրթությունը Հայաստանում, Վրաստանում և Բելառուսում՝ Բոլոնիայի օրակարգին համապատասխան, և կրթության ու ուսուցման բնագավառում



ստեղծել համագործակցություն ԵՄ և գործընկեր երկրների միջև և գործընկեր երկրներում՝ օժանդակելով դասախոսների և ուսանողների վիրտուալ շարժունությանը և զարգացնելով հարատև ուսումնառության ռեսուրսներն ու միջոցները:

Նշված նպատակներին հասնելու համար նախագծում նախատեսված է հետևյալ խնդիրների լուծումը.

1. Նպաստել դասախոսների վերապատրաստման կենտրոնների հզորացմանը գործընկեր բուհերում՝ զարգացնելով աշխատակազմի և վերապատրաստողների (հրահանգիչների) կարողությունները, արդիականացնելով ենթակառուցվածքները և ներմուծելով դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև ակադեմիական առաջնորդության նորարարական ծրագրեր:
2. Բարձրացնել գործընկեր բուհերի դասախոսական կազմի կարողությունները՝ զարգացնելով նրանց դասավանդման և ուսումնառության նորարարական ու տեխնոլոգիապես ուժեղացված հմտությունները և կոմպետենցիաների ու հետազոտության վրա հիմնված դասավանդման ունակությունները:
3. Հիմնել դասավանդման և ուսումնառության վիրտուալ ակադեմիա՝ որպես դասախոսների, վարչական կազմի և ուսանողների միջազգային հանրույթ, որոնք հետաքրքրված են Բաց կրթական ռեսուրսների օգտագործմամբ և փոխանակմամբ՝ տեխնոլոգիապես ուժեղացված դասավանդման և ուսումնառության բարելավման նպատակով:

4. Օժանդակել դասավանդման և ուսումնառության նորարարական և տեխնոլոգիապես ուժեղացված տեսակների և մեթոդների մասին ավելի մեծ իրազեկվածությանը և տարածել լավագույն փորձը գործընկեր երկրների բուհերում և այդ բուհերի միջև:

Նախագծի գործընկերներն են Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի, Բելգիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Շվեդիայի և Ավստրիայի մի շարք առաջատար համալսարաններ:

*Խնդիր 1.2-ի 2-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ձարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը*»: Նշված գործողությունը ժամանակային առումով վերաբերում է ՌԾ իրականացման ողջ ընթացքին: Այս ուղղությամբ գործընթացներն սկսել են իրականացվել 2016 թվականից և կշարունակվեն մինչև 2020 թվականը: Նախորդ ժամանակահատվածում արդեն իսկ արձանագրվել են որոշակի արդյունքներ: Մասնավորապես կիրառության մեջ է դրվել «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»: Համաձայն այդ կարգի՝ համալսարանի հիմնական աշխատողներին լրավճար տրվում է ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկի՝ ԵՊՀ համացանցային պորտալում տեղադրման դեպքում, իսկ դասախոսներին (բացառությամբ ժամավճա-

րային հիմունքներով աշխատող դասախոսների) լրավճար հատկացվում է նաև ուսանողական հարցման արդյունքներով անցկացվող մրցույթի արդյունքներով:

Խնդիր 1.2-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով»:* Այս գործողությունը ՌԾ-ի մեկնարկային գործընթացներից է, որի իրականացման ուղղությամբ որոշակի աշխատանք է ձեռնարկվել: Կատարված քայլերից է մասնավորապես մագիստրոսական թեզի և բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգերի մշակումը: Առաջին փաստաթուղթը՝ «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը», երկարատև մշակման, ֆակուլտներում և կենտրոններում քննարկման և դրա արդյունքում լրամշակման փուլերն անցնելուց հետո հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. մարտի 2-ի թիվ 5 նիստում: Փաստաթուղթը, որով նաև նախատեսված են գրագողությունը կանխելու միջոցառումներ, 2016/2017 ուստարվանից արդեն որոշակի մասով գործարկվել է: Այս կապակցությամբ հրապարակվել է ԵՊՀ ռեկտորի հրամանը, ըստ որի՝ 2016/2017 ուսումնական տարվանից սկսած՝ մագիստրանտներն իրենց մագիստրոսական թեզերը, ամբիոններում նախնական պաշտպանությունը կատարելուց հետո՝ թեզերի պաշտպանության օրվանից առնվազն 7 օր առաջ, պարտավոր են առցանց եղանակով պաշտոնապես ներկայացնել պաշտպանության:

Վերոնշյալ կարգերով հստակեցվել են թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման գործընթացները, մտցվել են դրանց կատարման ընթացքի մոնիթորինգի մեխանիզմներ, գնահատման չափանիշներ և չափորոշիչներ: Մասնավորապես, «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգում» ամրագրվել է, որ թեզի նախնական պաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության, իսկ թեզի հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»: Նույն պահանջներով դրույթներ տեղ են գտել նաև «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում», որը հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. հոկտեմբերի 12-ի թիվ 1 նիստում:

**«Որակյալ կրթություն»** ռազմավարական նպատակի *Խնդիր 1.3*-ով սահմանված է. **«Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը»:**

Խնդրի 1-ին գործողությունը՝ «Փորձնական սկզբունքով ստեղծել մի շարք կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում», չի իրականացվել:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում»: Այս ուղղությամբ աշ-

խատանքներն սկսվել են, որոշ գործընթացների արդյունքում նոր մեթոդներ են կիրառվում: Մասնավորապես գործարկվում է դասախոսական կազմի հաշվետվողականության նոր մեթոդ՝ ներդրված «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթի»՝ Համալսարանի ինտրանետ համակարգի միջոցով: Վերջինիս նպատակներից մեկն էլ ԵՊՀ հաշվետվողականության գործընթացները ավտոմատացնելը և առավել արդյունավետ դարձնելն է: Գործողության հետագա իրականացման նպատակով ձեռնարկվում են նաև այլ քայլեր:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը»*: Նշված գործողության իրականացմանը միտված գործընթացներն սկսվել են 2016 թվականից և կշարունակվեն մինչև 2020 թ.: Անցած ժամանակահատվածում ձեռնարկվել են աշխատանքներ որակի ապահովման և հավատարմագրման վեբ-հենքով վիրտուալ շտեմարանի ստեղծման ուղղությամբ, որի նպատակն է ապահովել ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմները, ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ու դրանց արդյունքների վերաբերյալ իրազեկել ԵՊՀ և լայն հանրությանը:

Վերոնշյալ խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները»*:

Այս գործողության իրականացմանը նպատակաուղղված՝ դեռևս 2016 թ. ձեռնարկվել են գործընթացներ հեռակա ուսուցման համակարգում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները փորձնական կարգով առցանց եղանակով կազմակերպելու ուղղությամբ: Ելնելով այդ փորձից՝ լրամշակվել և ԵՊՀ ԳԽ 2017 թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/2 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգը», և 2016/2017 ուստարում կիսամյակային հարցումները թե՛ հեռակա և թե՛ առկա ուսուցման համակարգերի ուսանողների շրջանում իրականացվել են առցանց եղանակով:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումները առցանց կազմակերպելու նպատակով նույնպես լրամշակվել են համապատասխան կանոնակարգը (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/3 որոշմամբ) և հարցաթերթերը: Անցած ուստարվա շրջանավարտների հարցումները (և՛ հեռակա, և՛ առկա ուսուցման համակարգերում) իրականացվել են առցանց եղանակով:

***Խնդիր 1.4-ով սահմանված է. «Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների առցանց մատուցման համար»: Այս առնչությամբ 2016/2017 ուստարում ստեղծվել է ԵՊՀ

«Մուդրլ» (Moodle) ուսուցման կառավարման համակարգի (ՈւԿՀ) և Ինտրանետ/ՍուպերՎիզիոն (Intranet/SuperVision) համակարգերի միջև կապ ապահովող մոդուլ, որը հնարավորություն է տալիս Ինտրանետ համակարգում գրանցված ուսանողներին և դասախոսներին մուտք գործել ՈւԿՀ-ում իրենց համար նախատեսված դասընթացներ: Այն մասնավորապես ապահովում է Ինտրանետ/ՍուպերՎիզիոն համակարգերում գրանցված օգտատերերի և դասընթացների միասնական նույնականացում և սինխրոնիզացում ՈւԿՀ-ի հետ:

Խնդիր 1.4-ի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար»:* Այս գործողության իրականացման նպատակով աշխատանքներ են տարվել ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ղեկավար ձեռնարկ-ուղեցույցի լրամշակման ուղղությամբ՝ հաշվի առնելով համապատասխան դիտողությունները և Խնդիր 1.4.1-ի ուղղությամբ կատարված աշխատանքը: Ուղեցույցի հրատարակությունը նախատեսվում է մինչև 2017 թ. ավարտը:

*3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար»*, որի շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրով իրականացվել է «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» 32-ժամյա համահամալսարանական դասընթաց 33 դասախոսի համար (2 խումբ): Դասընթացն ավարտվել է ունկնդիրների կողմից ավարտական նա-

խագծերի մշակմամբ, դրանց գնահատմամբ և թեստավորմամբ: Նախատեսվում է դասընթացի շարունակական իրականացում:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար»*: Այս գործողության իրականացմանն է ուղղված ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. մայիսի 26-ի թիվ N 7/2 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», որի համաձայն՝ ԵՊՀ աշխատողներին լրավճար վճարվում է գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար: Մասնավորապես, ըստ փաստաթղթի «Ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման կարգը» կետի 2.1. ենթակետում ներկայացված աղյուսակի 1-ին կետի՝ համալսարանի հիմնական աշխատողներին լրավճար վճարվում է ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկի՝ ԵՊՀ համացանցային պորտալում տեղադրման համար:

Նշված խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով»*: Այս գործողության կատարման նպատակով հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի բոլոր հոսքերում կիրառվել է «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ»,



իսկ 6 հոսքում՝ «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացների իրականացման հեռավար եղանակը:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները»*: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ուսուցանվող ուսուրսների և ծրագրային գործիքների թարմացում, մասնավորապես՝ վերամշակվել է «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի 300 և «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացի 220 հարց: Ներդրվել է ՈւԿՀ-ի հարթակի նորացված տարբերակը:

*Խնդիր 1.5*-ով սահմանված է. *«Մտեղծել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն»*: Ըստ ՌԾ իրականացման ժամանակացույց-ալանի՝ մինչև անցած ուստարվա ավարտը պետք է կատարվեին խնդրի 1-ին և 2-րդ գործողությունները, որոնցով նախատեսված է մշակել լեզուների ուսուցման նոր հայեցակարգը, կենտրոնի կանոնադրությունը և ԵՊՀ այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցության մեխանիզմները, ինչպես նաև կենտրոնի ծրագրային մեթոդական հենքը՝ լեզուների բազմամակարդակ ուսուցման համար: Նշված գործողությունները չեն իրականացվել՝ կապված համապատասխան շենքային պայմաններին և կենտրոնի բացմանը վերաբերող անորոշության հետ: Նախատեսվում է այս ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկել ընթացիկ ուստարում:

## II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին:*

**«Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի Խնդիր 2.1-ով սահմանված է. «Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը»:**

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով»: Նշված գործողության իրականացման համար ԵՊՀ-ում ներդրվել են գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշներ, որոնք ամփոփված են ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի 1.1. կետում: Կարգի համաձայն՝ ա/թ սեպտեմբերից ԵՊՀ բոլոր աշխատողները, ում հրապարակումները կրավարարեն կարգում նշված չափանիշները, կստանան լրավճար:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար»: Այս գործողության կատարմանն ուղղված՝ մշակվել և ներդրվել են մեխա-

նիզմներ, որոնք իրականացվում են համաձայն «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 1.1. կետի աղյուսակ 1-ի 1-ին կետի: Մասնավորապես, ազդեցության գործակցով ամսագրերի ցանկը հստակեցվել է ըստ «Clarivate Analytics» գործակալության ամենամյա «*Journal Citation Reports (JCR)*» զեկուցման մեջ ամփոփված ազդեցության գործակցով պարբերականների:

Խնդիր 2.1-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «*Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը*»: Այս գործողության իրականացման նպատակով, համաձայն «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 1.1. կետի աղյուսակ 1-ի 10-րդ կետի, նախատեսվում է լրավճար բոլոր այն ղեկավարների համար, ովքեր իրենց ասպիրանտներին կընդգրկեն նշված ծրագրերում: Իսկ մագիստրանտներին գիտահետազոտական գործունեության մեջ ընդգրկելու համար նախատեսվում է խրախուսում՝ համաձայն վերոնշյալ կարգի 2.1. կետի աղյուսակ 2-ի 9-րդ կետի:

4-րդ գործողությամբ նախատեսված է. «*Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը*»: ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածուում տպագրված աշխատանքների ղեկավարումը և առահասարկ ՈւԳԸ-ի գիտական ղեկավարումը խրախուսվում են՝ համաձայն «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 2.1. կետի աղյուսակ 2-ի 9-րդ և 10-րդ կետերի:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում»*: Բակալավրի կրթական ծրագրի վերանայման և համապատասխան հետազոտական բաղադրիչի ներդրման ուղղությամբ գործընթացները նախատեսված է սկսել 2017/2018 ուստարվանից, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչը 2017/2018 ուստարվանից արդեն ներդրվել է:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել Start-Up լաբորատորիաներ՝ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով»*: Այս գործողության իրականացման համար համաշխարհային բանկի ֆինանսական աջակցության միջոցով ստեղծվել է մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոն: Կենտրոնը ներառում է ինչպես կրթական, այնպես էլ գիտահետազոտական բաղադրիչ: Այն գտնվում է վերջնական կահավորման փուլում:

Շարունակվել է Ֆիզիկատեխնիկական կենտրոնի 3 «Start-Up» լաբորատորիաները տեխնիկայով հագեցնելու գործընթացը: Միաժամանակ մեծացել է այդ լաբորատորիաներում իրենց մասնագիտական հետաքրքրություններին համապատասխան հետազոտական աշխատանք կատարող ուսանողների թիվը:

*Խնդիր 2.2-ով սահմանված է. «Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ»*:

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. «Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում»: Այս գործողության իրականացմանը միտված՝ մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում ներգրավված են հանրապետության առաջատար գիտաշխատողներ տարբեր գիտահետազոտական կազմակերպություններից:

*2-րդ գործողությամբ* նախատեսված է. «Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը»: Այս նպատակով գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերն իրականացվում են տարբեր ոլորտներում: Մասնավորապես համատեղ ծրագրեր են իրականացվում ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» կենտրոնի միջև, ՀՀ ԳԱԱ ինստիտուտներից բավական մեծ թվով մասնագետներ համագործակցում են ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների հետ:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը»: Այս առումով շարունակական բնույթ է կրում ձեռնարկությունների հետ կրթական ծրագրերի իրականացումը, մասնավորապես, բացի արդեն ավանդական դարձած ծրագրերից (օրինակ՝ «Սինոփսիս» ընկերության և ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի համատեղ կրթական ծրագիրը), քննարկվող ժամանակահատվածում իրականացվել է նաև «Հայկական ծրագրեր» ընկերության և ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի հա-

մատեղ ծրագիրը: Շարունակվել է ԵՊՀ կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի և Էկոլոգիայի ու բնության պահպանության ամբիոնի համագործակցությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ՝ վերջինիս մատուցելով կրթական և հետազոտական ծառայություններ: Կոմբինատի Էկոլոգիական անվտանգության բաժնի աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել 112 ժամ աշխատաժամվալով: Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնը սկսած 2015 թ-ից համագործակցում է գինեգործության և խաղողագործության ոլորտի ինչպես գիտական, այնպես էլ արտադրական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, կենտրոնը համագործակցում է Վայոց Ձորի մի շարք ֆերմերային խաղողագործական տնտեսությունների հետ, «Արենի-1 քարայր» կոնսորցիումի, «Զորահ Վայնս», «Արենի», «Արմենիա Վայնս» գինեգործարանների հետ:

***Խնդիր 2.3-ով սահմանված է. «Խթանել Համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացումը»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ»:  
Հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ ամրագրելու մեխանիզմները դեռ մշակվում են:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում

*Համալսարանի աշխատողների հրապարակումները*: Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում համալսարանականների հրապարակումները խրախուսվում են այս տարվա սեպտեմբերից գործող «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 1.1. կետի աղյուսակ 1-ի 2-րդ կետի համաձայն: Մասնավորապես միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականների ցանկը հստակեցվել է ըստ «Web of Science» և «Scopus» շտեմարանների:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը»: Դիտարկվող ժամանակահատվածում օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը չի ավելացել: Այժմ 2 սերիա է միայն անգլերենով հրատարակվում, մյուսները եռալեզու են:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. «Շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությամբ»: ԵՊՀ կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովների շարունակականությունն ապահովելու և դրանց աջակցելու համար մշակվել և ներդրվել է կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն ստամադրելու կարգը, որը գործում է այս տարվա սեպտեմբերից:

Խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. «Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը»: Նախորդ ուստարվա համեմատությամբ 12 տոկոսով ավելացել է արտասահմանյան գործընկեր կազմակեր-

պություններ ԵՊՀ աշխատողների գործուղումների թիվը, ինչը վկայում է համագործակցության շարունակականության և խորացման մասին:

*Խնդիր 2.4-ով սահմանված է. «Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զայցբուրգյան սկզբունքներին»:*

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Կատարելագործել ասպիրանտական կրթությունը՝ որպես բաղադրիչ ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքի ստեղծումը»: Հաշվետու շրջանում շարունակվել և ընթացիկ ուստարում ավարտվել է «Էրազմուս պլուս» ծրագրով իրականացվող «Veritas» դրամաշնորհի շրջանակում պիլոտային ծրագրերի ներդրումը, որոնք համապատասխանում են Զայցբուրգյան սկզբունքներին: Մասնավորապես, որպես ասպիրանտական կրթության հիմնական բաղադրիչ է ընդունվում հետազոտական աշխատանքի միջոցով նոր գիտելիքի ստեղծումը:

3-րդ գործողությամբ նախատեսված է. «Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը»: Այս ուղղությամբ ԵՊՀ-ն շարունակաբար նպաստում է ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցության իրականացմանը:

4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր»: Այս նպատակով ԵՊՀ-ն եղած ռեսուրսների պայմաններում ապահովում է ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր:



### III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Զարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:*

**Հանրային ներգրավում և ծառայություններ»** ռազմավարական նպատակի *Խնդիր 3.1*-ով սահմանված է. **«Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը»:**

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Վերանայել ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը»:* ԵՊՀ հանրային կապերի, մարքեթինգի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը ԵՊՀ զարգացման ռազմավարական ուղղություններից մեկն է, որի դրույթներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով դեռևս 2016 թ-ին ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը 2017 թ. մշակել է ԵՊՀ հանրային կապերի, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) և մարքեթինգային գործունեության հայեցակարգի նախագիծը, որն ընդունվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. հուլիսի 6-ի նիստում:

Խնդիր 3.1-ի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը»:* 2017 թ. շարունակվել է ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների հետ արդյունավետ

գործունեությունը, պարբերաբար կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ նրանց հետ:

ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների հետ պարբերական աշխատանքը նպաստել է հանրային կապերի ոլորտում ներբուհական ցանցի արդյունավետության բարձրացմանը:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները»: Շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ համալսարանի ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն: ԵՊՀ պորտալում ընդգրկված են ավելի քան 90 կայք ու ենթակայք: Ամենօրյա աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում կայքի այցելուների թիվը 2016 թվականի համեմատ աճել է՝ հասնելով օրական միջինը 14400-ի (ըստ սերվերի ներքին վիճակագրական գործիքի): «Googleanalytics»-ի տվյալների համաձայն՝ շաբաթական այցելուների թիվն անցնում է 15.000-ը: Ամենաշատ այցելուները Հայաստանից են (91 %), այնուհետև Ռուսաստանից (2,2 %), ԱՄՆ-ից (1,2 %), Գերմանիայից (0,7 %), Վրաստանից (0,4 %) և այլն:

Կայքերի կարևորությունը (տվյալների հավաստի լինելը) ու տարածվածությունը որոշելու համար հաճախ օգտագործվում է «Google PageRank»-ը, որը չափվում է 0-10 վարկանշավորման սանդղակում: 2017 թ. ևս, «Google PageRank»-ի տվյալների համաձայն, ԵՊՀ պաշտոն-

նական կայքին տրվել է 7 միավոր (ռանկ), ինչը համարվում է բավականին լավ արդյունք:

ԵՊՀ պորտալում տեղակայվել և շահագործման են հանձնվել մի շարք կայքեր ու առցանց գործիքներ և նոր դիզայնով ու հավելումներով համալրված բաժիններ: Պարբերաբար թարմացվում են «ԵՊՀ փաստաթղթեր» (<http://doc.ysu.am>), «Դիմորդ» ([ysu.am/entrant](http://ysu.am/entrant)), «ԵՊՀ կառուցվածք» ([ysu.am/ysu](http://ysu.am/ysu)) և այլ կայքեր:

Խնդիր 3.1-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը»*: Գործունեության նպատակահարմարությունից ելնելով՝ մշակվել և ընդունվել է միասնական՝ «ԵՊՀ հանրային կապերի, մարքեթինգային գործունեության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության» հայեցակարգը, որում կարևոր բաղադրիչ է կազմում մարքեթինգային գործունեությանը: Սահմանված ժամանակահատվածում կատարվել են աշխատանքներ գովազդային նյութերի մշակման և բազմազան ուղղությամբ: Հրատարակվել են ԵՊՀ-ին վերաբերող անգլալեզու բուկլետներ, տեղեկատվական ֆլայերներ, օրացույցներ, թարմացվել և վերահրատարակվել է ԵՊՀ տեղեկատուն: Մշակվել և պատրաստ են արտադրության ԵՊՀ տարբերանշանով գանազան իրեր: ԵՊՀ 100-ամյակին ընդառաջ հայտարարվել է ԵՊՀ դրոշմանիշի էսքիզի մրցույթ: «ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՄՊԸ-ն մեկնարկել է աշխատանքները, պատվիրվել են ինքնատիպ հուշանվերներ ԵՊՀ խորհրդանիշներով:

Խնդիր 3.1-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը»*: 2017 թվականին ևս շարունակվել է ԵՊՀ-ին հասցեագրված թղթային և էլեկտրոնային նամակներին օպերատիվ արձագանքելու գործընթացը: ԵՊՀ պորտալում հրապարակված նորությունները տեղադրվել են ԵՊՀ «Facebook»-յան և «Twitter»-յան էջերում, որոնց ներքո՝ մեկնաբանությունների բաժնում, ծավալվել են քննարկումներ, հարցադրումներին տրվել պարզաբանող պատասխաններ: Ավելացվել է «Միջազգային» կայքի «Հայտարարություններ» բաժինը, որտեղ տեղադրվել է ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին վերաբերող ավելի քան 50 հայտարարություն, որոնք էլ նպաստում են սոցիալական հարթակում առավել ակտիվ քննարկումներին: Պարբերաբար մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու «Facebook» սոցիալական կայքի և ԵՊՀ պորտալի «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացված նամակները: 2017 թ. մայիսից գործում է նաև ԵՊՀ պաշտոնական «Instagram»-յան էջը:

Տարաբնույթ թեմաներով հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով իրականացվել են որակական հետազոտություններ (ֆոկուս-խմբեր):

Նույն խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել Համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները»*:

Համազգային ծրագրերում համալսարանի ներգրավումը տասնամյակներ շարունակ համարվում է գերակա ուղղություն: Մայր բուհը ստեղծման օրվանից ի վեր եղել է մեր ժողովրդի շահերի յուրատեսակ արտահայտիչը, նրա հետ է եղել ազգային բոլոր խնդիրների վերհանման ու վճռման պահերին: Այս համատեքստում իրականացվել են կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանը միտված և բարեգործական մի շարք ծրագրեր:

2017 թվականին շարունակվել է ֆինանսական աջակցություն ցուցաբերվել ապրիլյան պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին, մեծ ծավալի օգնություն է տրամադրվել Արցախին: ԵՊՀ-ն 2017 թվականին ևս իրականացնում է զոհված 24 զինծառայողի 56 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն տրամադրելու ծրագիրը: Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը 40.000 ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 20.000 ՀՀ դրամ: Այս դրամական օգնությունը տարեկան կազմում է ավելի քան 25 մլն դրամ: Շարունակվել են նաև սոցիալական ծրագրերը ուսանողների շրջանում, կատարվել են ավելի քան 400 մլն դրամի ուսման վարձի գեղչեր: Շարունակվում են արդեն ավանդույթ դարձած ծառատունկը Արցախում, նվիրատվությունները դպրոցներին և գյուղական համայնքներին, պարբերաբար ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում «Հայաստան» համահայկական հիմնադրամին և Հայաստանի երիտասարդական հիմնադրամին:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործունեությանը վերաբերող խնդիրներն ընդգրկված են 2017 թվականի հուլիսին ԵՊՀ գիտխորհրդի կողմից ընդունված «ԵՊՀ հանրային կապերի, մարքեթինգային գործունեության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգում»:

Խնդիր 3.1-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը»*: Այս նպատակով 2017 թվականին ընդլայնվել, փոփոխվել և կատարելագործվել է ԵՊՀ աշխատողների էլեկտրոնային փոստի համակարգը, որին մեծապես նպաստել է ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթի (intranet.ysu.am) ակտիվ շահագործումը: «Երևանի համալսարան» թերթը և պորտալի տարբեր կայքեր նույնպես ապահովում են կորպորատիվ ներքին հաղորդակցության բարձր մակարդակը:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. *«Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակաուղղել հանրային ծառայությունների մատուցմանը»*: 2017 թվականին ևս ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրքերից նվիրատվության կարգով պարբերաբար տրամադրվել են մայրաքաղաքի և մարզերի քաղաքային ու բուհական գրադարաններին: Համալսարանում իրականացված միջոցառումներին (օլիմպիադաներ, միջազգային մրցույթներ, գիտաժողովներ և այլն) մասնակցած ուսանողներին, ԵՊՀ հյուրերին նվիրվել են վերջին տարիներին հրատարակված արժեքավոր գրքերից: Հանրապետական և միջազգային ցուցադրությունների և էքսպոնների ընթացքում նույնպես ԵՊՀ հրատարակչության հրատարակած

մասնագիտական գրականությունից որոշակի քանակությամբ տրամադրվել է համապատասխան ոլորտով հետաքրքրված անձանց:

*Խնդիր 3.2-ով սահմանված է. «Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը»:* Խնդրի իրագործման համար 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և պարբերաբար իրականացնել շուկայում առկա լրացուցիչ կրթական ծրագրերի մշտադիտարկում»:

Աշխատաշուկայում և կրթաշուկայում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկն ուսումնասիրելու նպատակով կատարվել է հիմնականում փաստաթղթային վերլուծություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, խոշոր գործատուների և նրանց պատվերով տարբեր հաստատությունների կողմից իրականացված բազմաթիվ հետազոտությունների հիման վրա: Ուսումնասիրություն է իրականացվել նաև քանակական մեթոդով՝ ԵՊՀ-ում վերապատրաստվող հանրային ծառայողների հարցումներով: Նշված հետազոտությունները բացահայտում են լրացուցիչ կրթության առանձնահատուկ դերակատարումը աշխատաշուկա-բուհ հարաբերություններում: ՀՀ կառավարության ծրագիրը ոչ ֆորմալ կրթությունը դիտարկում է որպես գործազրկության կրճատման արդյունավետ գործիք: ՀՀ ԿԳՆ «ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության մասին ազգային զեկույց»-ից պարզվում է, որ Հայաստանում լրացուցիչ կրթություն է իրականացնում ավելի քան 245 կազմակերպություն:

2011-2015 թթ. ՀՀ-ում մասնագիտական ուսուցում է անցել շուրջ 940 000 անձ:

Աշխատաշուկայում մասնագետներին ներկայացվող պահանջների փոփոխությունները, լրացուցիչ կրթական ծրագրերի որակի ապահովումը և հաստատությունների մրցակցությունը անհրաժեշտ են դարձնում ԵՊՀ-ում գործող լրացուցիչ կրթական ծրագրերի մշտադիտարկումը: 2016/2017 ուսումնական տարում իրականացված մշտադիտարկման արդյունքում ամբողջությամբ կամ մասնակիորեն լրամշակվել են ԵՊՀ-ում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերը՝ և՛ բովանդակային, և՛ կադրային ապահովման առումով:

Ուսումնասիրության և մշտադիտարկման արդյունքները ներկայացված են «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքում (<http://extension.yzu.am/>):



#### IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

*Զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:*

«Որակյալ մարդկային ռեսուրսներ» նպատակի *Խնդիր 4.1*-ով սահմանված է. *«Զարգացնել դասախոսական կազմի ներուժը»:*

Խնդրի իրագործմանն ուղղված *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների»:* Այս ուղղությամբ գործընթացներն սկսվել են 2016 թվականից և ունեն շարունակական բնույթ: Անցած ժամանակահատվածում վերամշակվել են մագիստրոսական կրթական բոլոր ծրագրերը, ստեղծվել են ծրագրերի մասնագրերը, որոնցում առկա են ակնկալվող կրթական վերջնարդյունքները, հետևաբար նաև դրանց համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները:

Նշված խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը»:* Այս գործողության կատարմանը միտված՝ իրականացվել են մի շարք գործընթացներ. աշխատանքային խմբի կողմից լրամշակվել, ապա ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մարտի 30-ի 6/2 որոշմամբ հաստատվել է «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական հաշվարկի նորմերը»: Նորմերի նախագիծը հաս-

տատման է ներկայացվել բուհի ստորաբաժանումների դիտողությունները և առաջարկությունները քննարկելուց և փաստաթղթում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ անելուց հետո: Նորմերի փոփոխման համար հիմք են եղել ԵՊՀ նախորդ տարիների փորձն ու մշտադիտարկումների արդյունքները, ինչպես նաև ՀՀ պետական և միջպետական բուհերում գործող համանման կարգերի ու նորմերի ուսումնասիրությունները:

Նախկինում գործող նորմերի համեմատ ավելացել են որոշ դրույթներ: Այսպես, օրինակ, նոր նորմերում որոշակի ժամաքանակներ են նախատեսված բակալավրիատի կրթական ծրագրերի ղեկավարի, ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի, ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության աշխատանքներին մասնակցության համար: Պրակտիկաների բարելավման նպատակով էապես ավելացվել են արտադրական պրակտիկաներին հատկացվող ժամաքանակները, իսկ բակալավրիատի ուսումնական պրակտիկայի մասում տարանջատվել են պրակտիկաների տարբեր տեսակները:

*Խնդիր 4.2-ով սահմանված է. «Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ».* 1-ին գործողությամբ նախատեսված է. «Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ»: ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգը մշակելու նպատակով ԵՊՀ ռեկտորի 31.01.2017 թ. N17878 հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ԵՊՀ ռեկտորի գլխավորությամբ: Աշխատանքային խումբը մշակել է ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգը, որը ԵՊՀ գիտական խորհուրդը հաստա-

տել է 2017 թ. հուլիսի 6-ի իր նիստում: Հայեցակարգի նպատակն է սահմանել ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման ուղղությունները, իրականացվելիք բարեփոխումների առաջնահերթությունները, տեղական և միջազգային արդի փորձին համապատասխան սահմանել ԵՊՀ-ում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի հիմնական սկզբունքներն ու չափանիշները և իրականացվող միջոցառումների ժամանակացույցը: Հայեցակարգով նախատեսվում է ԵՊՀ-ում ստեղծել մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն, սահմանված են վարչության հիմնական գործառույթները, նախանշված են նրա գործունեության առաջնահերթությունները՝ աշխատողների պաշտոնների անձնագրերի (աշխատանքի նկարագրության) համակարգի ներդրում, անձնակազմի կառավարման տեղեկատվական նոր համակարգի ներդրում, ՄՌ կառավարման տարբեր գործընթացների ավտոմատացում, անձնակազմի վարչական, տեխնիկական և որոշ այլ տարակարգերի մասնագիտական զարգացման գործընթացի, արդյունավետության գնահատման և մոնիթորինգի ապահովման համակարգերի ներդրում և այլն:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր»*: Մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիրը հիմնականում պետք է մեկնարկի ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ստեղծումից և անձնակազմի ձևավորումից հետո: 2017 թ. սեպտեմբերին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում մեկնարկել է «Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական ծրագիրը, որում ընդգրկված պրոֆե-

սորադասախոսական կազմի և սովորողների ներուժը կօտագործվի ԵՊՀ ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման նպատակով:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար»,* իսկ *4-րդով՝ «Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնասօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար»:* Այս գործողությունները ևս կիրականացվեն ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ստեղծումից և անձնակազմի ձևավորումից հետո:

*Խնդիր 4.3-ով* սահմանված է. *«Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը»:*

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը»:* Այս գործողության իրականացմանն ուղղված գործընթացները շարունակական են և կապված են «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» կիրարկման հետ: Համաձայն ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մայիսի 4-ի նիստի թիվ 7/2 որոշման՝ 2016/2017 ուստարվանից ուժի մեջ են մտել նշված կարգի 1-ին և 2-րդ բաժիններում սահմանված աշխատանքների (գործունեության) հաշվարկման մասերը: 2017 թ. հուլիսի 15-ից ուժի մեջ են մտել նաև 1-ին և 2-րդ բաժիններում սահմանված աշխատանքների (գործունեության)

համար լրավճարների վճարման և կարգի 3-րդ բաժնով սահմանված մրցույթի արդյունքում լրավճարների հաշվարկման և վճարման մասերը: Կարգով սահմանված են և առանձին աղյուսակներով ու դրույթներով ներկայացված են Երևանի պետական համալսարանի աշխատողներին գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար լրավճարի վճարման կարգը, պայմանները, մասնավորապես գործունեության նկարագիրը, միավոր աշխատանքի գինը՝ ՀՀ դրամով, մեկ աշխատողին հասանելիք լրավճարի հաշվարկման կարգը, ուսանողական հարցման արդյունքներով դասախոսներին վճարվող լրավճարների հաշվարկման կարգը և այլն: Լրավճար ակնկալող ԵՊՀ աշխատողները կարգով նախատեսված ժամանակահատվածում համալսարանի համապատասխան կառույցներ են ներկայացնում իրենց գործունեության վերաբերյալ պահանջվող սահմանված ձևի տվյալները և համապատասխան նյութերը:

*3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաձի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության»:* Ըստ ժամանակացույցի՝ այս գործողությունը պետք է իրականացվի 2016-2020 թթ.: Հաշվետու ուստարում ԵՊՀ աշխատողների հիմնական աշխատավարձի բարձրացում չի եղել՝ պայմանավորված վերջին տարիներին ընդունելության նվազող ցուցանիշներով և, հետևաբար, ֆինանսական միջոցների պակասով: Այդուհանդերձ, ընթացիկ՝ 2017/2018 ուստարվա սեպտեմբերի 1-ից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի յուրա-

քանյուր մեկ հաստիքի ամսական դրույքաչափը բարձրացվել է 10000 (տասը հազար) ՀՀ դրամով:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր»: Այս նպատակով ԵՊՀ-ն շուրջ 2000 հիմնական աշխատողների համար ձեռք է բերել բժշկական ապահովագրության փաթեթ, որը հնարավորություն է տալիս ապահովագրության միջոցով իրականացնել տարեկան կանխարգելիչ հետազոտություն, աշխատողների տարեկան պարտադիր բժշկական զննում, շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն, պայմանագրով նախատեսված հիվանդությունների ամբուլատոր և ստացիոնար բուժում, քրոնիկ հիվանդությունների սրացման բուժում:

Միաժամանակ, 1-ին, 2-րդ, և 3-րդ կարգի հաշմանդամություն ունեցող հիմնական աշխատողների համար ԵՊՀ-ն սահմանել է ամենամսյա հավելավճար՝ համապատասխանաբար 20.000 դրամ, 15.000 դրամ և 10.000 դրամ գումարի չափով:

*5-րդ գործողությամբ* նախատեսված է. «Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզաստորոշարանային բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը բոլոր աշխատողների և սովորողների համար»: Այս գործողության իրագործման նպատակով ձեռնարկվել են մի շարք գործընթացներ: Մասնավորապես սկսվել և շարունակվում են նոր ուսանողական հանրակացարանի կառուցման աշխատանքները, որը նախատեսված է 290-300 ուսանողի համար: Հանրակացարանը կունենա երկտեղանոց սենյակներ՝ առանձին լվացարան-

ներով: Կլինի նաև մեկ մեծ ճաշարան, և յուրաքանչյուր հարկում՝ խոհանոց:

Նշված գործողության կատարման ուղղությամբ պարբերաբար իրականացվում է մշտադիտարկում՝ կապված ԵՊՀ տարածքում գործող հասարակական սննդի օբյեկտներում գնագոյացման քաղաքականության և սննդի որակի հսկողության հետ:

Պարբերաբար ուսումնասիրվում են նաև Ծաղկաձորի «Համալսարանական» ուսումնասարտադրական բազայում ԵՊՀ աշխատողների ու նրանց ընտանիքի անդամների և ուսանողների համար հանգստի կազմակերպման գնային քաղաքականության մատչելիությունը և տեղում իրականացվող սննդի որակի ապահովումը:

Մինևույն ժամանակ, դեռևս չեն իրականացվել Հանքավանի և Բյուրականի ուսումնասարտադրական և Դիլիջանի մարզաատոլջարանային բազաների վերակառուցման և/կամ վերանորոգման աշխատանքները:

## V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

*Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:*

**«Որակյալ ենթակառուցվածքներ»** ռազմավարական նպատակի *Խնդիր 5.1*-ով սահմանված է. **«Ջարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները»:**

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. **«Տեխնոլոգիապես վերագինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները»:** Այս գործողության առնչությամբ ամբողջովին արդիականացվել են Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի, Ֆարմացիայի ինստիտուտի շուրջ 15 լսարան ու ուսումնական լաբորատորիա: Ֆարմացիայի ինստիտուտում «Ալֆա ֆարմ» ընկերության հետ համատեղ բացվել է նաև «ուսումնական դեղատուն»: Արդիականացվել է գրադարանի մասնաշենքի 6-րդ հարկի էլեկտրոնային ռեսուրսների համակարգչային սրահը:

Ավելացվել և արդիականացվել են 40 լսարաններում պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքը տեսաձայնագրելու համար նախատեսված սարքավորումները:

Խնդիր 5.1-ի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. **«Վերանորոգել և արդիականացնել գիտական լաբորատորիաները»:** Շարունակվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթու-



թյան բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում ստեղծվող Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի հիմնադրման աշխատանքները (ձեռք են բերվել շուրջ 220 մլն դրամի արժողությամբ սարքեր, լաբորատոր և գրասենյակային կահույք): Ծրագրի ավարտը նախատեսվում է 2017 թ. դեկտեմբերին:

Կենսաբանության ֆակուլտետում բացվել է գենետիկայի և բջջաբանության ամբիոնի մոլեկուլային գենետիկայի լաբորատորիան: Գերժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիան կրում է ֆրանսահայ կենսաբան, դոկտոր Քրիստոֆ Թերզյանի անունը, որի ընտանիքի, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ կատարվել են լաբորատոր սարքերի արդիականացման աշխատանքներ:

Նշված խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. «Արդիականացնել մարզահամալիրը»: Այս առնչությամբ ԵՊՀ մարզահամալիրում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, որոնք ավարտվել են հաշվետու ուսումնական տարվա ընթացքում: Ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է ավելի քան 1.18 միլիարդ ՀՀ դրամ: Իրականացված հիմնական շինարարական աշխատանքների ծավալը կազմել է՝ մեծ դահլիճի մասնաշենք՝ 2462 մ<sup>2</sup>, բասկետբոլի և վոլեյբոլի մասնաշենք՝ 3075 մ<sup>2</sup>, հրաձգարան՝ 950 մ<sup>2</sup>, ուսումնական մասնաշենք (ֆիզդաստիարակության և սպորտի ամբիոն և այլն)՝ 912 մ<sup>2</sup>, տարածքների բարեկարգում (այդ թվում ասֆալտապատում)՝ 8000 մ<sup>2</sup>:

Վերոնշյալ խնդրի *7-րդ գործողությամբ* նախատեսված է. «Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանք-

ներ՝ *գուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ*»: Այս ուղղությամբ ԵՊՀ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ ուսումնական մասնաշենքերում կատարվել են լսարանների, միջանցքների, նկուղային հարկի, տարբեր աշխատասենյակների, լաբորատորիաների, սանհանգույցների, տանիքների (մասնակի կամ ամբողջությամբ), ջեռուցման համակարգերի վերանորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև 2-րդ և 4-րդ ուսումնական մասնաշենքերի արտաքին երեսպատման աշխատանքներ:

ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում իրականացվել են տարբեր աշխատասենյակների վերանորոգման աշխատանքներ:

Կենտրոնական և թիվ 7 մասնաշենքերում տեղադրվել են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար վերելակներ (երկուսը՝ կենտրոնական մասնաշենքում, մեկը՝ 7-րդում), կառուցվել են դրանց օգտագործման համար թեքահարթակներ: Վերանորոգված մարզահամալիրի և նորակառույց Հյուրերի տան մուտքերի առջև նույնպես կառուցվել են թեքահարթակներ:

Խնդիր 5.1-ի 8-րդ գործողությամբ նախատեսված է. «*Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը*»: Այս ուղղությամբ գրադարանի մասնաշենքում ամբողջությամբ տեղադրվել են էներգախնայող LED-տեխնոլոգիաներով լուսատուներ, վերանորոգվել է գրադարանի սրահներից մեկը:

Խնդիր 5.1-ի 9-րդ գործողությամբ նախատեսված է. «*Ընդլայնել հանրակացարանային բազան*»: Ավան համայնքում Ծարավ Աղբյուրի 55/5 հասցեում գտնվող նախկին Միջազգային կրթական կենտրոնի

մասնաշենքը կապիտալ վերանորոգվել է՝ շուրջ 300 ուսանողի համար նախատեսված հանրակացարանային համալիր ունենալու նպատակով: Հանրակացարանը կառուցվում է ամերիկահայ բարերար Ջորջ Ասատուրյանի կողմից մեկ միլիոն դոլար ԵՊՀ-ին կտակած գումարի և ԵՊՀ միջոցների հաշվին: Շինարարական աշխատանքները կավարտվեն հաջորդ ուսումնական տարվա ընթացքում:

Խնդրի *10-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել ուսումնական մասնաշենքերի հսկողության ենթակառուցվածքը»*: Այս առումով արդիականացվել է անվտանգության ծառայության կողմից օգտագործվող տեսահսկման համակարգը: Մի շարք մասնաշենքերում (այդ թվում՝ 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ ուսումնական մասնաշենքերում, մարզահամալիրում, Հյուրերի տանը), ինչպես նաև կենտրոնական մասնաշենքի բակում տեղադրվել են նոր տեսախցիկներ, որոնց միջոցով դիտարկումն իրականացվում է նաև ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի պահակակետից (նոր տեղադրված տեսախցիկների ընդհանուր քանակը՝ 68, իսկ շահագործվող տեսախցիկների քանակը՝ 143):

***Խնդիր 5.2-*** ով սահմանված է. ***«Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները»***:

Այս խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ստեղծել «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվությամբ»*: Այս նպատակով հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել են «Ուսանող-Համալսարան»

րան» վիրտուալ տիրույթի (ուսանողական ինտրանետ, virtual.yasu.am) ստեղծման աշխատանքները: Ստեղծվել է տիրույթի հիմքը: «Ուսանող-Համալսարան» վիրտուալ տիրույթի նպատակն է ապահովել սովորողի և համալսարանի դասախոսների, տարբեր կրթագիտական և վարչական կառույցների միջև տեղեկատվության արդյունավետ փոխանակման գործընթացը, ավտոմատացնել աշխատանքային մի շարք գործառույթներ և նպաստել ուսումնական և կազմակերպական գործընթացներում կիրառվող տեղեկատվական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

«Ուսանողական ինտրանետ» համակարգում մշակվել է մոդուլ, որը ուսանողի համար ստեղծված էլեկտրոնային փոստի հասցեն ավտոմատ կերպով գրանցում է SS կրթական և հետազոտական կենտրոնի կողմից վարվող «ԵՊՀ Moodle <http://iterc.yasu.am>» համակարգում՝ օգտագործելով ուսանողի էլփոստի հասցեն և գաղտնաբառը:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ձարգացնել ներքին համակարգչային օպտիկամանրաթելային, լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը»*: Հիմնովին վերանորոգված մարզահամալիրի և նորակառույց Հյուրերի տան համար անցկացվել է օպտիկամանրաթելային կապուղի՝ 1 Գբիթ/վ թողունակությամբ, տեղադրվել են անլար WIFI կապի երթուղիչներ: Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի մասնաշենքում և Ֆարմացիայի ինստիտուտում անցկացվել է նոր համակարգչային ցանց: ԵՊՀ մասնաշենքերում կատարվել են ներքին ցանցի բարելավման և լրացուցիչ լարանցումների աշխատանքներ (շուրջ 600 մ երկարությամբ UTP տիպի լարեր):

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը»*: Թարմացվել են ԵՊՀ սերվերների ծրագրային համակարգերը՝ ֆիզիկական սերվերներից անցում կատարելով վիրտուալ սերվերների օգտագործմանը: Նախագծվել և ավարտին է հասցվել ԵՊՀ սերվերային համակարգերի վիրտուալացման գործընթացը, որի արդյունքում հնարավոր է դարձել առավել արդյունավետորեն օգտագործել սերվերային ռեսուրսները և պահուստային պատճենների իրականացումը դարձնել ավելի ճկուն: Վիրտուալացման արդյունքում ներկայումս 6 ֆիզիկական սերվերների վրա մշտապես աշխատում են 30 վիրտուալ սերվերներ:

Վերոնշյալ խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել ներքին տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության մակարդակը»*: ԵՊՀ ներքին ցանցի աշխատանքը բարելավելու նպատակով շահագործվել է նոր ձեռք բերված արտաքին միջամտություններ և հարձակումներ կանխող ցանցային պաշտպանիչ սարք (Firewall), իսկ էլեկտրոնային փոստի սերվերների պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ մշտապես շահագործվել են «https» սերտիֆիկատներ:

Վերոնշյալ խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ»*: Աշխատանքային խումբը մշակել է ԵՊՀ գրադարանի զարգացման հայեցակարգի նախագիծը, որը քննարկվել է նաև ռեկտորատի անդամների կողմից: Ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա կատար-

վել են փոփոխություններ նախագծում: Հայեցակարգը կներկայացվի ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը 2018 թ. առաջին կիսամյակում:

Նույն խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը, ապահովել գրադարանի էլեկտրոնային քարտարանի ամբողջական ձևավորումն ու շահագործումը»:*

Գրադարանի քարտարանի էլեկտրոնային եղանակով շահագործումը շարունակելու և աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շահագործվել է «KOHА» համակարգը: Ներդրվել է ԵՊՀ գրադարանի համապատասխան ստորաբաժանումների աշխատողների լրավճարի համակարգը, որի արդյունքում ավելի քան 4 անգամ մեծացել են մուտքագրման ծավալները: Թվայնացվել է շուրջ 150 գիրք, և քարտարան է մուտքագրվել շուրջ 44000 անուն գրականություն:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել Համալսարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին»:* ԵՊՀ-ն շարունակել է իր անդամակցությունը «IFLA» և «LIBER» միջազգային գրադարանային ասոցիացիաներին, ինչպես նաև Հայաստանի գրադարանների ասոցիացիային և Հայաստանի էլեկտրոնային գրադարանների ասոցիացիային («ELCA»): Գրադարանը պահպանել է բաժանորդագրությունը ռուսական elibrary.ru գիտատեղեկատվական ցանցին, որի միջոցով հասանելի են ցանցի ավելի քան 1200 անուն ռուսալեզու պարբերականների էլեկտրոնային տարբերակները:

Գրադարանը գերմանական «Subito» կազմակերպության միջոցով կատարում է էլեկտրոնային հոդվածների սպասարկում օգտվողներին: Ծրագրի շրջանակներում 2016/2017 ուսումնական տարվա ընթացքում սպասարկվել է ավելի քան 3300 գիտական հոդված: Գրադարանը բաժանորդագրված է «Springer» էլեկտրոնային գրադարանին, որում ընդգրկված է 2.765 գիտատեխնիկական ամսագիր, ինչպես նաև «EBSCO» հրատարակչությանը, որը հնարավորություն է ընձեռում օգտվելու բազմաթիվ շտեմարաններից:

Խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը»:*

Գրադարանը շարունակել է նոր գրականության համալրումը: Գրադարանային ֆոնդը համալրվել է ավելի քան 584 անուն 12570 միավոր գրականությամբ:

## VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, իրանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:*

**«Որակյալ ծառայություններ» ռազմավարական նպատակի *Խնդիր 6.1*-ով սահմանված է. «Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ իրանող կրթական միջավայր ապահովելու նպատակով»:**

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է «*Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից*»: Ձևավորված նոր գումարման ուսանողական խորհուրդը ստեղծել է հետազոտական հանձնախումբ, որը մշակել է ուսանողների շրջանում իրականացվելիք համապատասխան սոցիոլոգիական ուսումնասիրությունների ծրագիր: Այն ներկայացվելու է Համահայկական երիտասարդական հիմնադրամի ֆինասավորմանը:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ձարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները*»: Այս նպատակով ԵՊՀ մի շարք ստորաբաժանումներ (Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն, Ձեռներեցության զարգացման կենտրոն) իրականացրել են դասընթացներ և կրթական բնույթ ունեցող այլ ծրագրեր: Որոշ նախաձեռնություններ իրականացվել են գործընկեր ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակում,



հրավիրվել են ոլորտի հայտնի փորձագետներ: Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացներին հաշվետու ուսումնական տարվա ընթացքում մասնակցել են ավելի քան 1500 ուսանող և շրջանավարտ:

Ուշագրավ են հատկապես «Լիդերության դերը կարիերայի զարգացման գործում. բուհ-ձեռնարկություն համագործակցության նոր ձևաչափ» խորագրով ծրագիրը, որն իրականացվել է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, Հայաստանում «Beeline» ընկերության, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի համագործակցության շրջանակում, ինչպես նաև Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի (ISTC) հետ համատեղ կազմակերպված «ԵՊՀ ամառային ստարտափ մրցույթ-2017»-ը:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսերի ուսանողները, մագիստրանտները և ասպիրանտները»*: Այս նպատակով Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի և Ուսանողական գիտական ընկերության կողմից մի շարք ֆակուլտետներում կազմակերպվում են տարբեր առարկայական խորհրդատվություններ: Իրականացվող միջոցառումներն ունեն պարբերական բնույթ, դրանք վարում են բարձր կուրսերի ուսանողները, ասպիրանտներն ու երիտասարդ դասախոսները: Ուշագրավ են հատկապես Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Ֆիզիկայի,

Մաթեմատիկայի և մեխանիկայի, Կենսաբանության, Աշխարհագրության և երկրաբանության, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներում իրականացվող սեմինար-խորհրդատվությունները:

*Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները»:*

Այս նպատակով Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի ջանքերով ստեղծվել և ակտիվորեն գործում են Մարտական պատրաստության, Բնապահպանական, Ֆրանկոֆոնիայի ակումբները: Բնապահպանական ակումբի ծրագրերից են «Կանաչ անկյուն» ծրագիրը ԵՊՀ-ում, «Ուսանողները հանուն բնության» ծրագիրը Դիլիջանում: Արդեն ավանդաբար կազմակերպվող մեծածավալ ծրագրերից է «Համահայկական ուսանողական ռազմական բանակումը» Արցախի Հանրապետությունում, որի նպատակն է զարգացնել ուսանողների մարտական և ֆիզիկական պատրաստության վիճակը, աջակցել ռազմահայրենասիրական դաստիարակությանը, տեսական և գործնական դասընթացների միջոցով զարգացնել ուսանողների ռազմագիտական և ռազմաքաղաքական գիտելիքներն ու հմտությունները:

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ գործում է «Բանավեճի ակումբը» (վերջինիս իրականացրած բանավեճի ակումբային առաջնությանը մասնակցել է շուրջ 32 թիմերի 200 ուսանող), անցկացվել են ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, որոնց շարքում՝ «Ի՞նչ,

որտե՞ղ, ե՞րբ»-ի, «Գուշակիր մեղեդին»-ի, «Կինոմանիա»-ի, «Ամենախելացի»-ի և այլ ինտելեկտուալ մրցակցային առաջնությունները: Հայրենաճանաչողական ծրագրերի շրջանակներում շուրջ 3000 ուսանող մասնակցել է կազմակերպված էքսկուրսիաներին դեպի ՀՀ պատմամշակութային վայրեր և թանգարաններ:

Ուսանողական մշակութային կյանքն ակտիվացնելու նպատակով Մշակույթի կենտրոնի ջանքերով ստեղծվել և գործում են հայկական ժողովրդական գործիքների «Էթնո բենդ», կիթառահարների, ինչպես նաև ազգագրական պարի խմբերը: Ակտիվ գործունեություն է ծավալում նաև «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը:

Խնդիր 6.1-ի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգ»:*

ԵՊՀ ուսանողական կառույցների նախաձեռնությամբ մշակվել է վարչական անձնակազմին առավել հաճախ դիմելու խնդիրների վերաբերյալ կանոնակարգ-ուղեցույցի նախագիծ, որը քննարկվել է աշխատանքային խմբերում: Հաշվի առնելով, որ առաջիկայում նախատեսվում է ընդունել Բարձրագույն կրթության մասին նոր օրենք (նախագիծը գտնվում է քննարկումների ակտիվ փուլում), որին կհաջորդեն նաև այլ իրավական ակտերի փոփոխություններ, որոշում է ընդունվել կանոնակարգ-ուղեցույցի մշակման աշխատանքները իրականացնել համապատասխան հստակեցումներից հետո:

Նշված խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «*Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը*»: Այս առնչությամբ ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կազմակերպել է խորհրդատվական միջոցառումներ համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողների և շրջանավարտների համար, ուսանող-գործատու հանդիպում-քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, մրցունակ և կայացած աշխատակից լինելու հիմնական գործոնները, երկարատև կարիերայի կառուցման նրբությունները և այլն: Ձեռնարկությունների հետ համագործակցությունը խթանելու և արդյունավետ դարձնելու նպատակով ակտիվորեն շահագործվում է նաև Ձեռնարկությունների հետ համագործակցության ինտերնետային պորտալը ([ysu.am/cooperation](http://ysu.am/cooperation)): Կազմակերպվել են այցելություններ տարբեր կազմակերպություններ և ձեռնարկություններ, լրացուցիչ պրակտիկաներ (ինտերնշիփեր), իրականացվել են նաև փորձնական թեստավորման միջոցառումներ: Այս ծրագրերում ներգրավված է եղել շուրջ 450 համալսարանական:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կենտրոնի գործընկեր կազմակերպությունների կողմից թափուր հաստիքների համալրման նպատակով ներկայացվել է 104 դիմում-հայտ, որոնց արձագանքած 1821 համալսարանականից աշխատանքի հնարավորություն է ստացել 72-ը:

*7-րդ գործողությամբ* նախատեսված է. «Նպաստել ուսանողների ձեռներեցության հատուկությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը»:

ԵՊՀ ձեռներեցության զարգացման նորաստեղծ կենտրոնը, համագործակցելով ձեռներեցության և ստարտափների խթանման ուղղությամբ գործող տարբեր կառույցների հետ, շարունակել է իրականացնել ուսանողների նորարարական և ձեռներեցական նախաձեռնություններին նպաստող ծրագրեր: Կազմակերպվել են նաև մի շարք դասընթացներ, որոնցից հատուկ շեշտադրման են արժանի հատկապես «Ուսանողների ձեռներեցական հատուկությունների զարգացումը ստարտափ նախաձեռնությունների համատեքստում» խորագիրը կրող մեկամսյա դասընթացների շարքը և Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի (ISTC) հետ համատեղ կազմակերպած «ԵՊՀ ամառային ստարտափ մրցույթ-2017»-ը: Կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊՀ գրադարանի մասնաշենքում «Ռոստելեկոմ» ընկերության աջակցությամբ բացվել է ճարտարագետ, գյուտարար, գունավոր հեռուստացույցի հայտնագործող Հովհաննես Աղամյանի անվան սրահը: Կենտրոնը, համագործակցելով ԵՊՀ ուսանողների և երիտասարդ մասնագետների հետ, նախաձեռնեց և իրականացրեց ԵՊՀ նորակառույց մարզահամալիրի տարածքում շուրջ 5Kwt հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանի տեղադրման ծրագիրը:

*8-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ընդլայնել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայություն-

ները»: Այս ուղղությամբ որոշակի գործընթացներ են իրականացվել: Մասնավորապես հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար շարունակաբար բարելավվում են համապատասխան ենթակառուցվածքները (տե՛ս սույն զեկույցի 5.1.7. կետը): Միաժամանակ, հաշվի առնելով ինտերնետային տեխնոլոգիաների հնարավորությունները, զարգացվում են համալսարանի կողմից ստեղծվող առցանց գործիքները: Ստեղծվել և մշակման փուլում է գտնվում «Ուսանող-Համալսարան» վիրտուալ տիրույթը (տե՛ս զեկույցի 5.2.2. կետը), շարունակաբար մեծանում է ԵՊՀ գրադարանի թվայնացված գրականության հավաքածուն (տե՛ս զեկույցի 5.2.7. կետը):

*9-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար»: Այս ուղղությամբ նույնպես որոշակի գործընթացներ չեն իրականացվել:

*10-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները»: ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը վարում է շրջանավարտների տվյալների բազան. բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտները դիպլոմներ ստանալու գործընթացի ժամանակ լրացնում են համապատասխան թերթիկներ: Միաժամանակ, ուսումնառության ընթացքում տրամադրված էլփոստի հասցեները ուսումնառությունը ավարտելուց հետո շրջանավարտները շարունակում են

շահագործել (էլփոստի համակարգը դիտվում է շրջանավարտի հետ հետագա կապի ապահովման լրացուցիչ գործիք):

ԵՊՀ ռեկտորի հրամանով ձևավորվել է ԵՊՀ 100-ամյակի միջոցառումները նախապատրաստող հանձնաժողով, մշակվում են տարբեր ծրագրեր և նախաձեռնություններ, որոնց իրականացման ու աջակցության գործընթացներում նախատեսվում է ներգրավել նաև անվանի շրջանավարտներին:

***Խնդիր 6.2-ով սահմանված է. «Զարգացնել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը»:***

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է «Մշակել ուսանողական ինքնակառավարման հայեցակարգ»: Ձևավորված նոր գումարման ուսանողական խորհուրդը ստեղծել է հայեցակարգի նախագիծը մշակող աշխատանքային խումբ: Քանի որ ներկա փուլում ընթացում են բարձրագույն կրթության մասին օրենքի նախագծի քննարկումներ, նախատեսվում է ԵՊՀ ուսանողական ինքնակառավարման հայեցակարգի վերջնական տարբերակը քննարկման ներկայացնել 2018 թ. ընթացքում:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ»:

Ուսանողական խորհուրդը առաջին կուրսեցիների համար անցկացրել է ամենամյա «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում» երկփուլ սեմինար-դասընթացը, որի նպատակը

ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր: Ծրագրին մասնակցել է շուրջ 230 առաջին կուրսեցի, որոնց մեծ մասը հետագայում համալրել է ՈւԽ ակտիվ անդամների շարքերը: Մեկնարկել են «Ալեք Մանուկյան 1» ՈւԽ ամսագրի վերահրատարակման աշխատանքները (հրատարակվել է երկու համար): Համապատասխանաբար վերագործարկվել է նաև «Ալեք Մանուկյան 1» ամսագրի կայքը:

Հիմնադրվել է նաև ՈւԽ «Զարգացում» դպրոցը, որի նպատակն է ոչ ֆորմալ կրթության միջոցով նպաստել ուսանողների հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

Խնդիր 6.2-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Խթանել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը»*: ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի և ուսանողական կառույցների նախաձեռնությամբ 2017 թ. հուլիսին կազմակերպվել է «Համահայկական ուսանողական ռազմական բանակումը» Արցախի Հանրապետությունում, որին մասնակցում էին ջոկատներ ՀՀ տարբեր բուհերից, Արցախից և Ջավախքից:

Հաշվետու ժամանակահատվածում՝ 2016 թ. դեկտեմբերին (արդեն 3-րդ անգամ՝ սկսած 2014 թ-ից), ՈւԽ-ն կազմակերպել է «Ուսանողական կառույցների ազդեցությունը և դերը բարձրագույն կրթական համակարգում» խորագիրը կրող ուսանողական միջազգային համաժողովը: Տասնմեկ երկրների առաջատար համալսարանների



շուրջ 50 ուսանողներ հավաքվել էին Հայաստանում՝ քննարկելու իրենց միավորող ու մտահոգող խնդիրները: ՈւԽ-ի կողմից կազմակերպվել է նաև բանավեճի միջբուհական առաջնություն:

Ուսանողական գիտական ընկերությունը, կարևորելով կրթագիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մասնակցություն է ունեցել ԱրՊՀ-ի, ԵՊՀ ԻՄ-ի, ՎՊՀ-ի, ՇՊՀ-ի և հայաստանյան այլ բուհերի կողմից կազմակերպվող գիտաժողովներին: ՈԻԳԸ անդամները մասնակցել են նաև միջազգային միջոցառումների, այդ թվում՝ կոնֆերանսների, սիմպոզիումների, համաժողովների ու վերապատրաստման դասընթացների ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Վրաստանում և այլուր: «ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականում տեղ են գտնում նաև ՀՀ այլ բուհերի սովորողների հոդվածները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ համատեղ Ս. Էջմիածնում կազմակերպվել է ավանդական դարձած միջոցառումը՝ նվիրված Վարդանանց նահատակներին, որին մասնակցել են նաև ՀՀ այլ բուհերի ուսանողներ:

Համալսարանականները մասնակցել են միջազգային, հանրապետական և համահամալսարանական մրցույթների և փառատոների (միջազգային քրեական իրավունքին նվիրված համաշխարհային դատախաղ-մրցույթ, մաթեմատիկայի և ծրագրավորման միջազգային օլիմպիադաներ, Միջբուհական ունիվերսիադա, Ֆրանսիական երգի մրցույթ և այլն):

ԵՊՀ ջոկատը մասնակցել է «Բազե-2017» համահայկական երիտասարդական հավաքին:

Խնդիր 6.2-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈւԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը»: Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունների զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնցից են «Գիտախոս» գիտահանրամատչելի զեկուցումների մրցույթը, «Գրքամարտ» ինտելեկտուալ մրցույթը, ինչպես նաև ուսանողական գիտական ճամբարները՝ կազմակերպված Կենսաբանության, Փիլիսոփայության և հոգեբանության և Ֆիզիկայի ֆակուլտետների ՈւԳԸ-ների կողմից: Միջբուհական ու ֆակուլտետային գիտաժողովներ և աշխատաժողովներ են անցկացվել Աշխարհագրության և երկրաբանության, Արևելագիտության, Իրավագիտության, Հայ բանասիրության, Ռոմանագերմանական բանասիրության, Ռուս բանասիրության, Պատմության, Սոցիոլոգիայի ֆակուլտետներում:

Ուստարվա կարևորագույն իրադարձություններից էր «ԵՊՀ ՈւԳԸ գիտական հողվածների ժողովածու» գիտական պարբերականի հերթական 7 համարների տպագրությունը: Այստեղ տեղ են գտել շուրջ 200 ուսանողի, ասպիրանտի ու երիտասարդ գիտնականի հողվածներ, որոնք ներկայացվել էին 2015 թ. տարեկան գիտական նստաշրջանին:

## VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ

### ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

*Զարգացնել Համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:*

**«Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» նպատակի *Խնդիր 7.1*-ով սահմանված է. «*Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով*»:**

Խնդրի իրականացման նպատակով նախատեսված բոլոր գործողությունների համար սահմանված է կատարման ժամկետ՝ 2016-2020 թթ.: Դիտարկվող ժամանակահատվածի համար նախատեսված գրեթե բոլոր գործընթացներն իրականացվել են:

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. «*Համալսարանի կառուցվածքում ստեղծել հենակետային վարժարան և նպաստել նրա շրջանավարտների ներհոսքին ԵՊՀ*»: Այս նպատակով ԵՊՀ-ն դիմել է Երևանի քաղաքապետին՝ համալսարանի անմիջական հարևանությամբ գտնվող Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոցը հանձնելու համալսարանին: ԵՊՀ-ն այս առնչությամբ համոզված էր, որ օգտագործելով համալսարանական լաբորատոր բազան, մարզահամալիրը և ապահովելով պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացում՝ վարժարանը կդարձնի հան-

րապետությունում լավագույններից մեկը՝ դրանով իսկ առավելագույնս նպաստելով նաև ավագ դպրոցի կայացման կարևոր գործին: Մակայն քաղաքապետից ստացված պատասխանում նշված է, որ Երևանի քաղաքապետարանը նպատակահարմար չի գտնում դպրոցի հանձնումը համալսարանին:

*2-րդ գործողությամբ* նախատեսված է. «Քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար»: ԵՊՀ-ն բազմիցս դիմել է ԿԳ նախարարին բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու խնդրանքով, սակայն այս խնդիրը նույնպես լուծում չի ստացել:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ձարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը»: Այս նպատակով 2016/2017 ուստարում հրատարակվել են բակալավրիատի կրթական ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող գովազդային նյութեր («Դիմորդի ուղեցույց-2017» ձեռնարկը՝ 2500 տպաքանակով), ինչպես նաև ԵՊՀ-ն ներկայացնող գունավոր բուկլետներ (8000 տպաքանակով): Դրանք բոլորն անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին:

Կատարելագործվել է ԵՊՀ պաշտոնական կայքում դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը՝ ինչպես հարց ու պա-

տասխանի, այնպես էլ բակալավրիատի ընդունելության կարգը և «Դիմորդի ուղեցույց - 2017»-ը կայքում տեղադրելու միջոցով:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. «*ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը*»: 9 տարի անընդմեջ ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար կազմակերպվում և անցկացվում է հանրակրթական 14 առարկաների գծով օլիմպիադա: 2017 թ. երկրորդ անգամ օլիմպիադան անցկացվել է 2 փուլով. մասնակիցների թիվը 1-ին փուլում 2283 էր, իսկ 2-րդ փուլում՝ 397: Օլիմպիադայի անցկացման մեջ մեծ է ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների օլիմպիական հանձնաժողովների (ղեկանների գլխավորությամբ) կատարած աշխատանքը: ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ օլիմպիադայում հաղթած և I, II և III կարգի դիպլոմների արժանացած 86 աշակերտի համար նախատեսվել է համալսարանի վճարովի համակարգ ընդունվելու դեպքում առաջին կուրսում նրանց տրամադրել համապատասխանաբար 50, 40 և 30 տոկոս ուսման վարձի զեղչ:

Նշված խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. «*ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ» հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար*»: Այս առումով, ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող 17 դպրոցների հիմնականում բնագիտական հոսքերի 10-11-րդ դասարանների 46 աշակերտի համար 2017 թ. Ծաղկաձորի «Համալսարանական» բազայում և ԵՊՀ համապատասխան

Ֆակուլտետներում կազմակերպվել է «Ամառային դպրոց» «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաներից: Անհրաժեշտ ծախսերի 80 տոկոսը (4 մլն դրամ) տրամադրվել է ԵՊՀ միջոցների հաշվին:

*6-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան»*: Համաձայն գործողության՝ Երևանի և մարզերի 100-ից ավելի դպրոցների մասնագիտական կողմնորոշման նպատակով 3500-ից ավելի ապագա դիմորդների համար կազմակերպվել են «Բաց դռների օրեր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ:

*7-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով*»: Համաձայն այս գործողության՝ դիմորդների հավաքագրման նպատակով ակտիվ աշխատանքներ են կատարվել ՀՀ բոլոր մարզերում, այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովվել են անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:

Խնդիր 7.1-ի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ԵՊՀ դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը*»: Այս գործողության իրականացմանն ուղղված՝ ՀՀ հանրակրթության

համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանն աջակցելու նպատակով ԵՊՀ-ն համագործակցության պայմանագիր է կնքել Երևանի և ՀՀ մարզերի ևս 3 ավագ դպրոցների հետ՝ դրանց թիվը հասցնելով 41-ի: Մայրաքաղաքի 15 ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 84 հեղինակավոր և փորձառու դասախոսներ 29 լրացուցիչ կրթական ծրագրով հատուկ դասընթացներ են վարել ԵՊՀ միջոցների հաշվին: Միննույն ժամանակ, ՀՀ մարզերի շուրջ 2 տասնյակ դպրոցներում ԵՊՀ դասախոսների կողմից իրականացվել է 118 բովանդակային դասախոսություն՝ հանրակրթական տարբեր առարկաներից:

Խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. «ԵՊՀ դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում»: Այս ուղղությամբ կատարվել է հետևյալը. ֆակուլտետների ղեկանների աջակցությամբ և դասախոսական կազմի լայն ներգրավվածության շնորհիվ Երևանի և ՀՀ մարզերի 76 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվել են 454 ակնարկային և բովանդակային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, ինչպես նաև ուսուցիչների համար մեթոդական խորհրդատվություններ:

*Խնդիր 7.2-ով* սահմանված է. «Օպտիմալացնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը»: Այս գործողության իրականացմանն ուղղված՝ կատարվել է շոշափելի աշխատանք: Նոր կրթական ծրագիր ստեղծելու գործընթացներն օպտիմալացնելու նպատակով ՈԱ կենտրոնը մշակել է կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթ, որը ներկայացվել է ուսումնական ստորաբաժանումներին՝ աշխատանքային խմբերի կողմից լրացվելու: Ձևաթերթում առանձին կետերով առաջադրված են հստակ պահանջներ, մասնավորապես ծրագրի ընդհանուր բնութագիրը (կրթական ծրագրի անվանումը, շնորհվող որակավորումը), ընդունելության չափաքանակները (1-ին տարում և հեռանկարային), նոր ծրագրի ներմուծման հիմնավորումը (անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը), աշխատաշուկայի վերլուծությունը, ծրագրի նպատակները և կրթական վերջնարդյունքները, ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, դասախոսական կազմը և այլն: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված աշխատանքները վերաբերել են մագիստրոսական կրթական ծրագրերին (առկա և հեռակա): Հայտերը քննարկվել են ԵՊՀ ռեկտորի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողովում, և համապատասխան որոշման համաձայն՝ հաստատվել են կրթական ծրագրերի անվանացանկերը: Իրականացվել են նաև մագիստրոսի կրթական ծրագրերի մշակման և հաստատման հետ կապված մնացած բոլոր գործընթացները:



2017/2018 ուսումնական տարում սկսվել են գործընթացները բակալավրի կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ:

*2-րդ գործողությամբ* նախատեսված է. «Պարբերաբար վերանայել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության կանոնակարգերը և կրթական ծրագրերի ցանկը»: Այս գործողության կատարմանն ուղղված՝ ԵՊՀ գիտխորհրդի 2017 թ. մարտի 2-ի նիստի թիվ 5/3 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2017/2018 ուստարվա ընդունելության կանոնակարգը»: Նույն նիստի թիվ 5/4 որոշմամբ հաստատվել է նաև «Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2017/2018 ուստարվա ընդունելության կանոնակարգը»:

Խնդրի *3-րդ գործողության* կատարմանը միտված՝ բոլոր մակարդակների կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար իրականացվել են աշխատանքներ համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործման ուղղությամբ:

*Խնդիր 7.3-ով* սահմանված է. «Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ»:

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. «Ընդլայնել ընդունելության դոնոր երկրների ցանկը, ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ներկայացուցչություններ»: Դոնոր

երկրների ցանկի ընդլայնման նպատակով որոշակի քայլեր են ձեռնարկվել Մերձավոր Արևելքի և մի շարք այլ երկրներում ԵՊՀ-ն ներկայացնող տեղեկատու նյութերի տարածման ուղղությամբ: Մասնավորապես ԵՊՀ աշխատողների արտասահմանյան գործուղումների ընթացքում այդ երկրների հավանական դիմորդների շրջանում ներկայացվել են ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր: Այդ թեմայով նաև դասախոսություն է կարդացվել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կողմից սփյուռքահայ ունկնդիրների համար կազմակերպված ամառային դասընթացների ժամանակ:

*2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար»*: Այս գործողության կատարմանը միտված՝ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Մասնավորապես բանակցություններ են վարվել հնդկական «M/C BLB» կազմակերպության, Սանկտ-Պետերբուրգում գործող «Rusin» ՓԲԸ-ի հետ համագործակցող հնդկական «Bawaliye Education Pvt.LTD» կազմակերպության, Նոր Դելիի առաջատար բժշկական գիտությունների ինստիտուտի (DIAMS), Կանադական միջազգային լեզվական ակադեմիայի (գործում է նաև ԻԻՀ տարածքում), իրաքյան «Scientific Level Company» (Իրաք, Էրբիլ) կազմակերպության, ինչպես նաև անհատ միջնորդ, պրոֆ. Շահդին Շահուզի

(ԻԻՀ) հետ, որոնց հետ համագործակցության թույլտվություն ստանալու համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ ԿԳՆ:

Խնդրի իրագործման նպատակով նախատեսված *3-րդ գործողությանը* սահմանված է. *«Համալսարանի կայքում ներկայացնել ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր»*: Այս գործողության առնչությամբ հրատարակվել և վերահրատարակվել է ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ընդունելության և ուսումնառության պայմանների, համալսարանի, նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու–ուղեցույցը, որը համալսարանից գործուղվող աշխատողների, ՀՀ ԿԳՆ սփյուռքի բաժնի, ՀՀ դեսպանատների միջոցով տարածվել է օտարերկրյա պետություններում հավանական դիմորդների շրջանում: Նշված նյութերը տեղադրվել են նաև համալսարանի կայքում:

Խնդրի *4-րդ գործողությանը* նախատեսված է. *«Կատարելագործել նախապատրաստական կրթական ծրագրերը՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար»*: Այս գործողության կատարման նպատակով իրականացվել են մի շարք գործընթացներ: Մասնավորապես կատարելագործվել են նախապատրաստական կրթական ծրագրերը, ներմուծվել են դասընթացների կազմակերպման նոր մոդելներ, մշակվել և նորացվել են բոլոր առարկայական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով ընդունելության ընդունված չափանիշներին: Մտցվել է դասընթացների վարման 2

փուլից բաղկացած տարբերակ (տարրական գիտելիքների յուրացման և հիմնական կրթական գիտելիքների մակարդակի՝ ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու փուլեր): 2017/2018 ուսումնական տարվանից օտարերկրյա դիմորդների լեզվական գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով ավելացվել են հայոց լեզվի դասաժամերը: Համապատասխան մասնագիտական խմբերի կազմավորման մոդելի կատարելագործման և դասաժամերի համակարգման շնորհիվ միաժամանակ տեղի է ունեցել ֆինանսական միջոցների խնայողություն:

## VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

### ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:*

Ռազմավարական 8-րդ նպատակի **8.1. խնդրով** սահմանված է. **«Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները»:**

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական ծրագրերին մասնակցության ընդլայնման միջոցով»: Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալները եղել են կայուն և պահպանվել են տարեկան 3 (երեք) միլիարդ ՀՀ դրամի շրջանակներում: Կրթական ծրագրերի ֆինանսավորումը կազմում է տարեկան 2 (երկու) միլիարդ ՀՀ դրամ, իսկ 1 (մեկ) ուսանողի հաշվարկով ուսման վարձի փոխհատուցման նպաստի պետական ֆինանսավորումը բոլոր մասնագիտությունների գծով 2017 թվականին կազմում է 656740 (վեց հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Գիտական դրամաշնորհային ծրագրերի տարեկան ֆինանսավորումը կազմում է 1 (մեկ) միլիարդ ՀՀ դրամ:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով»: 2017/2018 ուսումնական տարում 2016/2017 ուսումնական տարվա համեմատ ուսման վարձավճարների չափերը չեն փոփոխվել:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին»: Ըստ հաշվետու ժամանակահատվածին վերաբերող տվյալների՝ կրթական, գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին ԵՊՀ-ի մասնակցությունը 2016 թվականի համեմատ պահպանվել է նույն չափով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները»: 2017 թվականին կանոնակարգվել է ԵՊՀ հյուրերի տանը և մարզադահլիճներում վճարովի ծառայությունների կազմակերպումը: Այդուհանդերձ, վճարովի ոչ կրթական ծառայությունների ֆինանսական մուտքերը համալսարանի ընդհանուր եկամուտներում էական չեն:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները»: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ շրջանավարտների և այլ շահառուների հետ տարվել են

գործընկերային աշխատանքներ, սակայն համալսարանում իրակա-  
նացվող ծրագրերին ֆինանսական աջակցություն դեռևս չկա:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ուսումնասիրել  
Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագոր-  
ծել տարաբնույթ բիզնես ծրագրեր»*: Անցած ուստարում համալսարա-  
նական բիզնես ծրագրեր չեն իրականացվել:

**Խնդիր 8.2-ով սահմանված է. «Ձարգացնել Համալսարանի ֆի-  
նանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական  
և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը»:**

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Ներդնել ռիսկերի  
կառավարման համակարգ՝ շուկայական և տնտեսական տարաբնույթ  
ռիսկերի նկատմամբ Համալսարանի ռեսուրսների կայունության ա-  
պահովման նպատակով»*: Ռիսկերի կառավարման նպատակով հա-  
մալսարանի դրամական միջոցները ներգրավվում են առևտրային  
բանկերի կողմից առաջարկվող ավանդային ծրագրերում՝ հաշվի առ-  
նելով բնականոն առօրյա գործունեության չխաթարումը: Տարվում է  
քաղաքականություն՝ ֆինանսական մուտքերի ավելացմանը զուգըն-  
թաց հնարավորինս չավելացնելու ծախսերը, ինչի արդյունքում տա-  
րեցտարի ավելանում են համալսարանի ֆինանսական տարեվերջի  
դրամական միջոցների մնացորդները:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ձարգացնել ֆի-  
նանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համա-  
կարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպե-  
րատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով»*:  
Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման, ծրագրային

ապահովման նպատակով ներդրված «Հայկական ծրագրեր, 6-րդ տարբերակը» 2017 թվականի տարեվերջին փոխարինվելու է ավելի կատարելագործված 7-րդ տարբերակով: Կատարելագործվել է նաև ներդրված «Հայկական ծրագրեր-Ձեռնարկություն» ծրագիրը, որը համատեղ շահագործվում է ԵՊՀ հաշվապահության և կադրերի բաժնի կողմից: Դեռևս ներդրման և փորձարկման փուլում է գտնվում «Ուսանող» ծրագիրը, որը շահագործվելու է ԵՊՀ հաշվապահության և ուսումնամեթոդական վարչության կողմից:

Խնդիր 8.2-ի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը»*: Այս կապակցությամբ, համալսարանի ֆինանսական գործառույթներ իրականացնող հաշվապահության, կադրերի բաժնի և գնումների պլանավորման ու պահեստավորման վարչության աշխատողների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ: Կազմվել և գործողության մեջ են դրվել հաշվապահական ծառայության գործառույթների իրականացման ընթացակարգեր:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր»*: Այդ նպատակով իրականացվել են պիլոտային ծրագրեր, մասնավորապես մասնաշենքերում լուսատուները փոխարինվել են «ԼԵԴ» («LED») լուսատուներով, մարզահամալիրի տանիքին տեղադրվել է «Արևային ՖՎ» համակարգը, պատուհանների ապակիները թաղանթապատվում են ջերմամեկուսիչ նյութերով:



*Խնդիր 8.3-ով նախատեսված է. «Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը»:*

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Օպտիմալացնել Համալսարանի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը»:* Այս ուղղությամբ գործընթացներն իրականացվում են անընդհատ և շարունակաբար:

2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել ՀՀ բուհերի կազմակերպական-իրավական ձևի մասին օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ՀՀ ԿԳՆ»:* Այս գործողության ուղղությամբ որոշակի գործընթացներ են ձեռնարկվել՝ սկսած 2016 թ-ից. մասնավորապես մշակվել և ԿԳՆ է ներկայացվել «Գիտակրթական հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ինչպես նաև ներկայացվել են բազմաթիվ առաջարկներ «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, շարունակվել են քննարկումները այդ ուղղությամբ:

Խնդիր 8.3-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել ՀՀ բուհերի իրավահավասարության ու արդար մրցակցության ապահովման ծրագիր և ներկայացնել ՀՀ ԿԳՆ»:* Այս գործողության առնչությամբ մշակվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Խնդիր 8.3-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Համալսարանի նոր կանոնադրությանը»:*

2016/2017 ուսումնական տարում ևս շարունակվել է ներքին իրավական ակտերը համալսարանի նոր կանոնադրությանը համապատասխանեցնելու գործընթացը: Մշակվել, վերանայվել և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ փաստաթղթերը.

- Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգը (2016 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 3 նիստ, որոշում 3/6),
- Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգը (նոր խմբագրությամբ) (2017 թ. հունվարի 26-ի թիվ 4 նիստ, որոշում 4/2),
- Երևանի պետական համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգը (նոր խմբագրությամբ) (2017 թ. հունվարի 26-ի թիվ 4 նիստ, որոշում 4/3),
- ԵՊՀ միջազգայնացման հայեցակարգը (2017 թ. հունվարի 26-ի թիվ 4 նիստ, որոշում 4/5),
- Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը (2017 թ. մարտի 2-ի թիվ 5 նիստ, որոշում 5/6),
- Երևանի պետական համալսարանի աշխատողների օտարերկրյա գործուղումները ձևակերպելու կանոնակարգը (2017 թ. մարտի 2-ի թիվ 5 նիստ, որոշում 5/7),

- ԵՊՀ մեթոդական խորհրդի և ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգերը (2017 թ. մարտի 30-ի թիվ 6 նիստ, որոշումներ 6/3 և 6/4),
- «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստ, որոշում 7/4),
- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը (2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստ, որոշում 7/5),
- Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (2017 թ. հուլիսի 6-ի թիվ 8 նիստ, որոշում 8/3),
- Երևանի պետական համալսարանի հանրային կապերի, մարքեթինգային գործունեության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգը (2017 թ. հուլիսի 6-ի թիվ 8 նիստ, որոշում 8/6),
- Երևանի պետական համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգը (2017 թ. հուլիսի 6-ի թիվ 8 նիստ, որոշում 8/7):

Մշակվել, նորովի խմբագրվել կամ փոփոխությունների և լրացումների են ենթարկվել համալսարանի վարչական և գիտակրթական մի շարք կառուցվածքային ստորաբաժանումների (Միջազգային համագործակցության, Գիտական քաղաքականության վարչությունների, Հաշվապահության, Քիմիայի ֆակուլտետի, Ֆարմացիայի ինստի-

տուտի, Ֆիզիկական դաստիարակության և սպորտի, Քաղաքացիական պաշտպանության ամբիոններին) կանոնադրությունները:

Խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Համալսարանի կառավարման համակարգում ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ»*: Համաձայն ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի՝ այս գործողության կատարումը նախատեսված էր ավարտել 2017 թ. դեկտեմբերին, սակայն այդ ուղղությամբ գործընթացներ չեն իրականացվել:

Խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ»*: Այս գործողության իրականացմանը միտված՝ որոշակի քայլեր ձեռնարկվել են: Մասնավորապես աշխատանքներ են տարվում ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը չափող ցուցանիշների և աուդիտի իրականացման ընթացակարգերի մշակման ուղղությամբ:

Խնդրի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել Համալսարանի տեղեկատվական համակարգերը»*: Այս առնչությամբ 2016/2017 ուստարվա ընթացքում մշակվել և ստեղծվել է «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթ» («Ինտրանետ», intranet.ysu.am) համակարգը, որը հնարավորություն է ստեղծում ԵՊՀ աշխատողների համար՝ մուտքագրելու տեղեկատվություն իրենց աշխատանքների մասին (հոդվածներ, գիտաժողովի նյութեր, մենագրություններ, գրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսություններ, արտոնագրեր, դրամաշնորհներ, քարտեզներ), ինչպես նաև դյուրին է

դարձնում հավաքագրված տեղեկատվության վերամշակմամբ տարբեր տեսակի հաշվետվություններ ստանալը:

Հաշվետու ուստարում մեկնարկել են «Ուսանող-Համալսարան» վիրտուալ տիրույթի («Ուսանողական ինտրանետ», virtual.yasu.am) ստեղծման աշխատանքները: Ստեղծվել է վիրտուալ տիրույթի հիմքը:

Նշված խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը համալսարանական կառավարման գործընթացներում»*: Այս նպատակով ԵՊՀ ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված տարբեր դասընթացների և սեմինարների ընթացքում ներկայացվում են ներհամալսարանական կառավարման տարբեր գործընթացներ: ՈւԽ կողմից հիմնադրված «Զարգացում» դպրոցի, «Հաջողության նախագիծ» նախաձեռնության, «Բանավեճի ակումբի» շրջանակում իրականացվող ծրագրերի արդյունքում զարգանում են ուսանողների առաջնորդության հմտություններն ու կարողությունները, ԵՊՀ տարբեր մակարդակների կոլեգիալ կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողները տեղեկանում են բուհական և կրթական ոլորտի հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծման ուղիների մասին:

***Խնդիր 8.4-ով սահմանված է. «Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»:***

Խնդրի իրագործմանն ուղղված *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանող-*

*ների իրազեկվածության մակարդակը*»: Այս գործողության իրականացմանն ուղղված գործընթացները շարունակական են և մշտապես գտնվում են ԵՊՀ ղեկավար մարմինների ուշադրության կենտրոնում:

Ներհամալսարանական գործող կարգերը և ընթացակարգերը, հրամաններն ու այլ փաստաթղթեր օպերատիվ տեղադրվում են ԵՊՀ ինտերնետային պորտալի «Փաստաթղթեր» կայքում: Առանձին հիմնախնդիրներին պարբերաբար անդրադարձ է կատարվում ԵՊՀ պորտալի «Նորություններ» բաժնում, ինչպես նաև «Երևանի համալսարան» պաշտոնաթերթում, համապատասխան փաստաթղթերի մասին տեղեկատվությունը ուսանողներին ուղարկվում է նրանց տրամադրված համալսարանական էլեկտրոնային փոստի համակարգի միջոցով: ԵՊՀ ռեկտորատի անդամները (ռեկտոր, պրոռեկտորներ, դեկաններ, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ) պարբերաբար հանդիպումներ են ունենում ուսանողների հետ, պատասխանում նրանց հուզող հարցերին: ԵՊՀ ինտերնետային պորտալի «Հարց ու պատասխան» բաժինն օպերատիվ պատասխանում է ուսանողների և հանրության ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերին:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը Համալսարանի կառավարման համակարգում*»: Այս ուղղությամբ նույնպես իրականացվում է շարունակական աշխատանք: Մասնավորապես, համալսարանի կառավարման մարմինների որոշումներն ու արձանագրությունները և այլ փաստաթղթեր տեղադրվում են ԵՊՀ կայքում:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և գործածության մեջ դնել «Համալսարանի աշխատողների և ուսանողների էթիկայի կանոնակարգ»*: Այս ուղղությամբ թեև որոշակի քայլեր ձեռնարկվել են, սակայն շոշափելի աշխատանք չի կատարվել:

Վերոնշյալ խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Քննարկել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում»*: Այս ուղղությամբ իրականացվում է ամենամյա գործընթաց:

Խնդիր 8.4-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ»*: Այս գործողության կատարմանն է նպատակամղված Իրավագիտության ֆակուլտետում իրականացվող «Իրավունքի տեսություն, սահմանադրական իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի բաղադրիչ «Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնախնդիրները» դասընթացի մշակումը, որը կդասավանդվի ընթացիկ ուստարվա 2-րդ կիսամյակից:

## IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:*

«Միջազգայնացում և գործակցություն» ռազմավարական նպատակի *9.1. խնդրով* սահմանված է. *«Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը»:*

Խնդրի իրագործմանն ուղղված *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել միջազգայնացման հայեցակարգ»:* Այս նպատակով ԵՊՀ գիտխորհրդի 2017 թ. հունվարի 26-ի 4/5 որոշմամբ հաստատվել է ԵՊՀ միջազգայնացման հայեցակարգը, որով սահմանվում են համալսարանի միջազգայնացման քաղաքականության հիմնական ուղղությունները:

Խնդրի *2-րդ գործողությանը* համապատասխան՝ մշակված միջազգայնացման գործընթացների գնահատման տարեկան առանցքային ցուցանիշների հիման վրա իրականացվել է բենչմարքինգ:

*3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները»:* Այս գործողությամբ նախատեսված միջազգայնացման գործընթացների պատասխանատու փոխդեկանների ինստիտուտը առայժմ գործում է որոշ ֆակուլտետներում, և հաջողության դեպքում նախատեսվում է մինչև 2020 թ. այն կիրառել նաև մյուս կառույցներում:



Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել միջազգայնացման աջակցության համացանցային պորտալ և վիրտուալ պլատֆորմ»*: ԵՊՀ կայքում պարբերաբար թարմացվում է միջազգայնացմանն առնչվող տարբեր ուղղությունների, հետազոտության, միջազգային փոխանակումների, այդ թվում՝ «Էրազմուս պրոյուս» ծրագրի և միջբուհական համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, գործող INET և PICASA դրամաշնորհային ծրագրերի շրջանակում ստեղծված միջազգայնացման վիրտուալ պլատֆորմում ներկայացվում են մեթոդական նյութեր:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Իրականացնել միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում»*: Այս ուղղությամբ ավարտվել է INET դրամաշնորհային ծրագրի շրջանակում միջազգայնացման ոլորտում ներգրավված 14 վարչական աշխատողի, պրոֆեսորադասախոսական կազմի 131 ներկայացուցչի, 11 ուսանողի վերապատրաստման գործընթացը: Վերապատրաստվողներն ստացել են մեկական կրեդիտ:

6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ»*: 2016/2017 ուստարում ԵՊՀ-ն ընդունել է հարյուրից ավելի արտասահմանցի գործընկեր մասնագետների, որոնք հանդես են եկել դասախոսություններով և իրականացրել են հետազոտական աշխատանքներ:

***Խնդիր 9.2-ով նախատեսված է. «Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում»:***

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել և ընդլայնել ամառային կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրե-*

րը»: Այս ուղղությամբ նախատեսված միջոցառումների համար հստակեցվել է ֆակուլտետներում կազմակերպվող օտարալեզու դասընթացների ցանկը, որն առաջիկայում հասանելի կլինի ԵՊՀ կայքում:

Կազմակերպվել են ռուսաց լեզվով դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել և ընդլայնել ամառային կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրերը»*: ՀՀ սփյուռքի նախարարությունը և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը 2017 թ. համատեղ կազմակերպել են «Սփյուռք» ամառային դպրոցը, որի մասնակիցների թիվը նախորդ տարիների համեմատ զգալիորեն աճել է:

Նշված խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանը: Խթանել ներգնա և արտագնա շարժունությունը»*: Այս տեսակետից ԵՊՀ կայքը ակնհայտորեն գործիք է դարձել փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն փնտրելու և ստանալու համար, ինչը նպաստել է 2016/2017 ուստարում ԵՊՀ աշխատողների և սովորողների շարժունության թվի զգալի աճին. նշված ժամանակահատվածում արտասահման են գործուղվել ԵՊՀ 249 մասնագետ, 208 ուսանող և ասպիրանտ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ»*: Այս առումով հաջողությամբ իրականացվել են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի շրջանակում

(շարունակվել են ծրագրերը միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի, սնտեսագիտության, կառավարման, զբոսաշրջության բնագավառներում, մեկնարկել է ֆարմացիայի ոլորտում իրականացվող ծրագիրը):

Կրկնակի դիպլոմներով ծրագրեր մեկնարկել են «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» համալսարանի հետ, նաև մեկնարկել է 2 ծրագիր Բելգորոդի համալսարանի հետ՝ ֆարմացիայի և կենսաբանության բնագավառներում:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

2016-2020 ԹԹ.

ԶԵԿՈՒՅՑ

2016/2017 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չափսը՝ 70x100<sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 5.75:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

[www.publishing.am](http://www.publishing.am)